

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՅՈՒՐՈ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑ 2017Թ.**

ՀԱՅԱՍՏԱՆ

Հրապարակվել է 20 ապրիլի, 2018թ

ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Ըստ սահմանադրության Հայաստանը երկրի ընտրովի ղեկավար և միապալատ օրենսդիր կառույց (Ազգային ժողով) ունեցող հանրապետություն է: 2015թ. սահմանադրական հանրաքվեի արդյունքներով երկիրը 2018թ.-ին՝ նախագահի պաշտոնավարման ընթացիկ ժամկետի ավարտին անցում է կատարում կառավարման խորհրդարանական համակարգի: Ազգային ժողովում տեղերի մեծամասնությունը զբաղեցնում է Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), որն առաջնորդվելով Նախագահ Մերժ Սարգսյանի կողմից, շարունակում է գերիշխող դիրք զբաղեցնել երկրի քաղաքական կյանքում: Ապրիլի 2-ին երկրում խորհրդարանական ընտրություններ տեղի ունեցան՝ նոր սահմանադրության ներքո: Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) գնահատմամբ որ ընտրությունները «լավ էին կազմակերպված և հիմնարար ազատություններն ընդհանուր առմամբ պահպանվել էին», սակայն դրանք սովորվեցին ընտրակաշառքների և հանրային ծառայողների ու մասնավոր ընկերությունների աշխատողների վրա ճնշումների մասին արժանահավատ տեղեկություններով: Դա նպաստեց հանրության կողմից ընտրությունների նկատմամբ ընդհանուր վստահության ու հավատի բացակայությանը: ԵԱՀԿ բնութագրմամբ 2013թ. նախագահական ընտրությունները լավ էին կազմակերպված, սակայն կային թերություններ, այդ թվում՝ ոչ հավասար խաղի պայմաններ, քվեարկության օրը գրանցված լուրջ խախտումներ և ընտրական գործընթացի անաչառության վերաբերյալ մտահոգություններ: Նմանատիպ թերություններ էին արձանագրվել նաև 2015թ. սահմանադրական հանրաքվեի ընթացքում:

Քաղաքացիական իշխանությունները պահպանել են արդյունավետ վերահսկողություն անվտանգության ուժերի նկատմամբ:

Մարդու իրավունքների հետ կապված առավել նշանակալի խնդիրները ներառում են. խոշտանգումներ. ծանր և կյանքի համար վտանգավոր բանտային պայմաններ. կամայական ձեռքարկություն և կալանք. դատական անկախության բացակայություն. արդար դատաքննության չապահովում. բռնություն լրագրողների դեմ. միջամտություն մամուլի ազատությանը՝ օգտագործելով կառավարության իրավական լիազորությունները քննադատական բովանդակությունը պատժելու համար. անվտանգության ուժերի ֆիզիկական

միջամտություն հավաքների ազատության հարցում. քաղաքական մասնակցության սահմանափակումներ. կառավարության համակարգային կոռուպցիա. լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս (ԼԳԲՏԻ) անձանց պաշտպանության չապահովում բռնությունից. երեխայի աշխատանքի վատթարագույն ձևեր, որոնց վերացման ուղղությամբ կառավարության ձեռնարկած ջանքերը մինիմալ են:

Իշխանությունները պաշտոնյաների կողմից թույլ տված չարաշահումների մասին հաղորդումների հիման վրա իրականացրել են սուկ մակերեսային քննություններ: Իրավապահները հաճախ անպատժելիորեն թույլ են տվել չարաշահումներ, երբեմն հենց ուղղակիորեն իրավապահ համակարգի ղեկավարների հրամանով: Իշխանությունները ոչ ոքի պատասխանատվության չեն ենթարկել 2008թ. հետընտրական բախումների արդյունքում գոհված 10 անձանց մահվան համար, ինչպես նաև որևէ պաշտոնյա պատասխանատվություն չի կրել 2015թ. և 2016թ. հուլիսի բողոքի ակցիաների ժամանակ լրագրողներին և քաղաքացիներին ծեծի ենթարկելու համար:

ՄԱՍ 1. ՀԱՐԳԱՆՔ ԱՆՁԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ա) Կամայական ձևով կյանքից զրկելը կամ այլ անօրինական կամ քաղաքական սպանություններ

Պետության կամ պետության գործակալների կողմից կամայական և ապօրինի սպանությունների մասին հաղորդումներ չեն եղել:

Անջատողականները, Հայաստանի աջակցությամբ, շարունակել են վերահսկել Լեռնային Ղարաբաղի մեծ մասը և յոթ հարակից ադրբեջանական տարածքներ: Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը շարունակում է մնալ միջազգային միջնորդական ջանքերի օրակարգում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում, որտեղ համանախագահում են Ֆրանսիան, Ռուսաստանը և Միացյալ Նահանգները: Բախումները շփման գծում շարունակվել է: Կրկնվող կրակոցների ու արկակոծման հետևանքով եղել են զոհեր զինծառայողների և քաղաքացիական անձանց շրջանում: 2016թ. ապրիլի բախումների ալիքից հետո հակամարտության կողմերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանին (ՄԻԵԴ) բողոքներ են ներկայացրել, որտեղ միմյանց մեղադրում են վայրագություններ թույլ տալու մեջ: ՄԻԵԴ-ում գործերը դեռևս ընթացքի մեջ են :

Ոչ մարտական պայմաններում բանակում գրանցված մահվան դեպքերի թիվն ըստ հաղորդումների նվազել է: Ըստ «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության (ՀԿ) տարվա ընթացքում ոչ մարտական պայմաններում գրանցվել է մահվան 59 դեպք 2016թ. 162 դեպքի համեմատ: «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ը ոչ

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

մարտական պայմաններում գրանցված բոլոր մահվան դեպքերն էլ կասկածելի է համարում, չնայած չի նշում թե ինչ պատճառով կամ պատճառներով: Մակայն մի շարք դեպքերում ոչ մարտական պայմաններում գոհված զինճառայողների ծնողներն անվստահություն են հայտնել պաշտոնական քննության վերաբերյալ, իսկ նրանց փաստաբանները մատնացույց են արել բազմաթիվ դատավարական խախտումներ և գործի նյութերին ծանոթանալու ժամանակ չտալու հանգամանքը: Օգոստոսի 22-ին հետաքննող լրագրողների «Հետք» ինտերնետային թերթը հոդված հրապարակեց, որտեղ նկարագրվում էին այն բազմաթիվ խոչընդոտները, որոնց բախվել էին լրատվամիջոցն ու «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը բանակում տեղ գտած ինքնասպանությունների մասին վիճակագրություն, ինչպես նաև այդ գործերի մանրամասները ստանալու հարցում:

Ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերից մեկով 2016թ. նոյեմբերին ՄԻԵԴ-ը որոշում կայացրեց, որ 2002թ. շարքային Մուրեն Մուրադյանի (ծառայում էր Լեռնային Ղարաբաղի տարածքում) մահվան հարցում պետությունը խախտել է կյանքի իրավունքը և սահմանեց, որ պետությունը Մուրադյանի ընտանիքին վճարելու է 50.000 եվրո (60.000 ԱՄՆ դոլար) հատուցում: Թեպետ կառավարությունն այդ գումարը վճարեց, սակայն միջոցներ չձեռնարկվեցին Մուրադյանի մահվան մեջ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

բ) Անհետացումներ

Հաղորդումներ անհետացումների, առևանգումների կամ հափշտակումների մասին՝ կատարված իշխանությունների կողմից կամ անունից, չեն եղել:

գ) Խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ

Օրենսդրությունն արգելում է նման գործելակերպերը: Այնուհանդերձ, եղել են հաղորդումներ, որ անվտանգության ուժերի ներկայացուցիչները կանոնավոր կերպով արգելանքի տակ գտնվող անձանց ենթարկել են խոշտանգումների կամ թույլ են տվել այլ ոտնձգություններ: Նման գործելակերպ ունեցող պաշտոնյաների պատասխանատվության ենթարկելու որևէ դեպք հայտնի չէ:

Ոստիկանության բռնությունները կասկածյալների նկատմամբ նրանց ձերբակալության, բերման ենթարկելու կամ հարցաքննության ընթացքում շարունակում են մնալ որպես զգալի խնդիր: Ըստ իրավապաշտպան ՀԿ-ների, հաշվեհարդարի վախից ելնելով, տուժողներն անօրինաչափ գործողությունների մասին խուսափում են հաղորդում տալ: Բռնությունները տեղի են ունենում ոստիկանական բաժանմունքներում, քանի որ դրանք, ի տարբերություն բանտերի կամ ձերբակալվածների պահման վայրերի, չեն վերահսկվում հասարակական

դիտորդների կողմից: Ըստ դիտորդների ուստիկանությունը ձերբակալությունն օգտագործում է որպես պատիժ: Քրեական արդարադատության մարմինները դատապարտումների համար հիմք են ընդունել խոստովանություններն ու հարցաքննությանը ձեռք բերված տեղեկությունները: Ըստ մարդու իրավունքների հարցերով փաստաբանների ուստիկանության հարցաքննությունների ժամանակ վատ վերաբերմունք թույլ չտալու համար չեն եղել բավարար ընթացակարգային երաշխիքներ, ինչպիսիք են օրինակ՝ որպես վկա ուստիկանություն կանչված անձանց համար փաստաբանի հասանելիության ապահովումը, ինչպես նաև ուժով կամ ընթացակարգային խախտմամբ ձեռք բերված իրեղեն ապացույցների անընդունելիությունը:

Ըստ իրավապաշտպան դիտորդների հազիվ թե եղած լինի որևէ քննություն ուստիկանության վատ վերաբերմունքի կասկածյալ դեպքերով, որով քրեական պատժամիջոցներ սահմանված լինեն որևէ իրավապահ պաշտոնյայի նկատմամբ: Մարդու իրավունքների հարցերով փաստաբանները մատնացույց են անում խոշտանգումների գործերի առնչությամբ կիրառվող կողմնակալ դատական ու քննչական պրակտիկան և խոշտանգումից տուժած անձի կողմից չարաշահման մասին հաղորդումներից հետո հնարավոր սուտ մեղադրանքների մասով քննություն սկսելու պրակտիկան:

Ըստ կառավարության վիճակագրության 2015թ. քրեական օրենսգրքում խոշտանգումների նոր սահմանման ընդունումից հետո որևէ պաշտոնյա տարեվերջի դրությամբ չի դատապարտվել այդ հոդվածով:

Դեկտեմբերի կեսի դրությամբ պատկան մարմինների կողմից քրեական հետապնդում չէր իրականացվել 2016թ. հուլիսին «Մասնա Ծոեր» զինված խմբի կողմից Էրեբունու ուստիկանական գնդի տարածքի գրավման հետ կապված քաղաքական բողոքի ակցիաների ընթացքում ցուցարարների, լրագրողների, քաղաքացիական և քաղաքական ակտիվիստների և շարքային քաղաքացիների հանդեպ դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունք դրսևորած իրավապահների հանդեպ:

Հունիսի 28-ին ըստ մարդու իրավունքների հարցերով փաստաբանների, դատական նիստի վերսկսվելուն սպասելիս տեղի ունեցած միջադեպի ժամանակ ուստիկանությունը ձեռի է ենթարկել «Մասնա Ծոեր» զինված խմբի չորս անդամների: Ծեծի հետևանքով մեղադրյալների մոտ առաջացել էին կտրվածքներ և կապտուկներ դեմքի, գլխի, որովայնի, մեջքի և ոտքերի շրջանում: Հունիսի 30-ին մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը հայտարարություն տարածեց՝ կոչ անելով Գլխավոր դատախազությանը հաղորդումների հիման վրա քննություն սկսել: Թեպետ քննություն սկսվեց, սակայն տվյալ ուստիկանների պարտականությունները քննության ընթացքում չէին կասեցվել և դատական լսումներին նրանք շարունակում էին աշխատել նույն կալանավորների հետ:

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Գործընկերություն հանուն բաց հասարակության նախաձեռնության կողմից Խոշտանգումների հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողովին 2016թ. հոկտեմբերին ներկայացված հաշվետվության համաձայն հոգեբուժական հաստատություններում անկախ քաղաքացիական վերահսկողության բացակայությունը հանգեցրել է հոգեկան ու սոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ոչ համարժեք պաշտպանության: Ըստ հաշվետվության կանոնակարգերը չեն ապահովում բավարար երաշխիքներ կանխելու գսպման ֆիզիկական միջոցների կիրառումն այն դեպքերում, երբ դրանք կիրառվում են ոչ թե միայն բժշկի որոշմամբ, այլ նաև որպես պատժամիջոց և մյուս պացիենտներին ահաբեկելու մեթոդ:

Եվրախորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն (ԽԿԿ) 2016թ. երկիր կատարած այցի մասին հաշվետվության մեջ նշել էր, որ երկու հոգեբուժական կլինիկաների զգալի թիվ կազմող պացիենտներ կարծես թե դե ֆակտո անազատության մեջ էին: Թեպետ նրանք ստորագրել էին համաձայնագիր կամավոր այդ հաստատություններում գտնվելու մասին, սակայն պացիենտներն այլևս չէին ցանկանում մնալ այդ հիվանդանոցներում: Գործընկերություն հանուն բաց հասարակության նախաձեռնության կողմից ներկայացված հաշվետվության համաձայն հաճախ այդ բուժումը պարտադրված է, քանի որ գործնականում պացիենտի համաձայնությունը ստանում են ճնշումների ու վերջինիս ազգականների և բուժհաստատության աշխատակիցների սպառնալիքների արդյունքում:

Ըստ մարդու իրավունքների փորձագետների հոգեբուժական հաստատություններում գրանցված մահվան դեպքերով պատշաճ քննություններ չեն անցկացվել: Կառավարության տվյալներով հոգեբուժական հաստատություններում 2016-17թթ. մահացել է 73 հոգի, որոնց մեծ մասի դեպքում պատճառն եղել է հիվանդությունը, և միայն մեկը եղել է ինքնասպանություն: Երկու քննություն է սկսվել բժշկական անփութության/անգործության մեղադրանքով (մեկը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով, իսկ մյուսով քննությունը տարեվերջի դրությամբ դեռ չէր ավարտվել) և հարուցվել է մեկ քրեական գործ ինքնասպանության հասցնելու մեղադրանքով: Վերջինս նույնպես կարճվել է:

Թեպետ զինված ուժերում տեղ գտնող բնությունների ծավալների մասին հուսալի վիճակագրություն չկա, սակայն կենցաղային վատ պայմանները, կոռուպցիան և հրամանատարների հաշվետվողականության բացակայությունը շարունակել են ծառայակիցների ու վերադասի կողմից զինվորների հանդեպ վատ վերաբերմունքի դրսևորման և վնասվածքների պատճառ հանդիսանալ: Ըստ Պաշտպանության նախարարության զինծառայողները չեն զեկուցում քրեածին պահվածքի ու բնությունների բոլոր դեպքերի մասին: Թեպետ զինվորական ղեկավարությունն ընդունում է խնդրի առկայությունն ու ձգտում հաղթահարել այն, որոշ դիտորդներ փաստում էին, որ որոշ զինվորական հրամանատարներ դա, ինչպես նաև նորակոչիկների նկատմամբ բնությունները, համարում են կարգապահություն ապահովելու արդյունավետ միջոց:

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Հունվարին Պաշտպանության նախարարության Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնը գործարկեց թեժ գիծ, որը քաղաքացիները, ինչպես նաև ընթացիկ և նախկին զինծառայողները և նրանց ընտանիքի անդամները կարող էին օգտագործել գտնելու տեղեկություններ առկա խնդիրների ողջ շրջանակի մասին՝ ոտնձգություններից մինչև զինված ուժերում տիրող կոռուպցիա: Կենտրոնն օրական ստանում էր շուրջ 100 զանգ:

Զինվորների ընտանիքները հայտնել են, որ շատ գործասեր վերահսկում են կոռուպացված պաշտոնյաները, իսկ տարվա ընթացքում լրատվամիջոցներում եղել են հրապարակումներ այնպիսի դեպքերի մասին, երբ բանակ են գորակոչվել առողջական լուրջ խնդիրներ ունեցող անձինք: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի մասնաճյուղի ներկայացուցիչը մի հարցազրույցում նշել էր, որ տարեցտարի ավելանում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի անձանց զինվորագրումը:

Բանտերի ու կալանավայրերի պայմանները

Բանտային պայմանները բնութագրվում էին վատ սանիտարահիգիենիկ վիճակով, ոչ համարժեք բուժսպասարկմամբ և համակարգային կոռուպցիայով. շարունակում էր խնդրահարույց մնալ որոշ քրեակատարողական հիմնարկների գերբնակեցվածությունը և որոշ դեպքերում պայմանները խիստ ծանր էին և կյանքի համար վտանգավոր: Քրեակատարողական հիմնարկներում, ընդհանուր առմամբ չեն եղել հարմարություններ հաշմանդամություն ունեցող բանտարկյալների համար:

Ֆիզիկական պայմաններ. ԽԿԿ-ն իր 2016թ. հաշվետվության մեջ նշում է, որ ազգային մակարդակում բանտերի գերբնակեցվածության խնդիր այլևս չկա, սակայն որոշ հաստատություններ, հատկապես Նուբարաշենի քրեակատարողական հիմնարկը գերբնակեցված է: ԽԿԿ-ն նաև նկատում էր, որ Նուբարաշենում շարունակում են անընդունելի մնալ պահման նյութական պայմանները: Ըստ քրեակատարողական հիմնարկներում հասարակական վերահսկողություն իրականացնող Հասարակական դիտորդական խմբի (ՀԴԽ) Նուբարաշենի որոշ խցերում պահման պայմանները խոշտանգման և անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի դրսևորում են: Ըստ ՀԴԽ-ի շատ խցեր խոնավ են, բորբոսով պատված, չունեն բավարար լուսավորություն ու օդափոխություն, կեղտոտ են և դրանցում միջատներ են վիստում: Բանտարկյալներից շատերի համար ջուրը հասանելի էր միայն որոշակի ժամերի: Սննդամթերք, անկողնային և հիգիենայի պարագաներ բանտարկյալները ստացել են իրենց ընտանիքներից: Ըստ ՀԴԽ-ի մյուս քրեակատարողական հիմնարկներում ևս նմանատիպ իրավիճակ է տիրել:

Ըստ պաշտոնական տվյալների տարվա առաջին 10-ն ամիսների ընթացքում մահացել է 14 բանտարկյալ, որից 11-ը հիվանդության, 2-ը՝ ինքնասպանության, իսկ 1-ը պատահարի պատճառով: Ըստ ՀԴԽ-ի բանտարկյալների մահվան հետ կապված անպատժելիությունը

շարունակում է մնալ մարդու իրավունքների ամենանշանակալի խնդիրներից քրեակատարողական հիմնարկներում: ՀԴԽ-ը նշում էր, որ սովորաբար պատկան մարմինները բանտարկյալի մահվան դեպքով քննություն չեն սկսում, եթե մահացածն ընտանիք չունի և վերջինս նման պահանջ չի ներկայացնում:

Ըստ իրավապաշտպան կազմակերպությունների՝ մահացության ցուցանիշը շենքերի աղքատիկ ֆիզիկական պայմաններից զատ պայմանավորված է նաև բանտային կյանքում գերակայող կազմակերպված քրեական կառուցակարգի առկայությամբ և բանտարկյալների բուժօգնության հարցում դրսևորվող անփութությամբ: ԽԿԿ-ն իր 2016թ. հաշվետվության մեջ նշում էր, որ քրեակատարողական հիմնարկների ղեկավարության մոտ նկատվում է բանտային ոչ ֆորմալ հիերարխիայի վերևում գտնվող բանտարկյալների շարքից մի քանի ընտրյալների (կոչվում են «նայողներ»), մասնակի լիազորություններ տալու միտում և օգտագործելու նրանց բանտարկյալների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով:

Մահվան դեպքերից մեկը Հրաչյա Գևորգյանն էր, որ մահացավ ապրիլի 5-ին Արմավիր քրեակատարողական հիմնարկում: Գևորգյանը, ով դատապարտված էր ութը տարվա ազատազրկման պատանդ վերցնելու, իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու և շորթման մեղադրանքներով, ուներ մի շարք առողջական խնդիրներ: Ազատազրկման ընթացքում, այդ թվում՝ 4 տարվա նախնական կալանքի ընթացքում, նրա հոգեկան ու ֆիզիկական առողջությունը քայքայվել էր այն աստիճանի, որ նա հազիվ էր կարողանում խոսել, իսկ քայլել ընդհանրապես չէր կարողանում: Գևորգյանը մի քանի անգամ հացադուլ արեց՝ պահանջելով իրեն պատշաճ բուժօգնություն ցուցաբերել: Ըստ Մարդու իրավունքների հելսինկյան ասոցիացիայի փաստաբանների, Գևորգյանը, ով շարունակաբար առաջ էր քաշում կոռուպցիայի և քրեակատարողական հիմնարկում տեղ գտնող այլ չարաշահումների հարցերը, մեկ անգամ չէ, որ բանտում ենթարկվել է բռնության: Ապրիլի 7-ին Արմավիրի մարզի դատախազությունը բժշկական անփութության մեղադրանքով գործ հարուցեց կապված Գևորգյան մահվան հետ:

Նախկին բանտարկյալները և բազմաթիվ իրավապաշտպան դիտորդներ ևս առաջ են քաշում քրեակատարողական հիմնարկներում համակարգային կոռուպցիայի և կաշառքների խնդիրը:

ԽԿԿ-ի այցելությամբ քրեակատարողական հիմնարկների բուժառայություններում կրկին արձանագրվել է կադրերով ոչ լիարժեք համալրվածություն (ԽԿԿ-ի նախորդ այցերի համեմատ իրավիճակի վատթարացում է նկատվել Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում) և տեխնիկական զինվածության անբավարար մակարդակ, և նաև խնդիրներ կապված մասնագիտական բուժօգնության հասանելիության հետ: Նաև արձանագրվել էր դեղամիջոցների լուրջ պակաս: Քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմը չուներ ինքնուրույն գործելու իրավասություն և բանտարկյալին հիվանդանոց տեղափոխելու, կամ

բանտարկյալի գործում ֆիզիկական վնասվածքի մասին գրառում կատարելու համար պետք է ստանար վարչական թույլտվություն:

Ըստ ՀԴԽ-ի և իրավապաշտպան կազմակերպությունների՝ բանտերում ամենավատ պայմաններում գտնվում են ԼԳԲՏԻ անձինք: Նրանք հաճախ խտրականության, բռնության, այդ թվում սեռական բռնության թիրախ են դառնում, և մյուս բանտարկյալները նրանց ստիպում են կատարել արժանապատվությունը նվաստացնող աշխատանք: Քրեակատարողական հիմնարկների ղեկավարությունը վերահաստատում և հանդուրժում էր նման վերաբերմունքը և ԼԳԲՏԻ անձանց պահում առանձնացված խցերում, որտեղ պայմանները համեմատաբար ավելի վատ էին: ՀԴԽ-ը փաստում էր, որ նույնասեռական տղամարդիկ, կամ նրանց հետ կապ ունեցողները և այն բանտարկյալները, որոնք դատապարտված են այնպիսի հանցանքների համար, ինչպիսիք են՝ բռնաբարությունը, պահվում են մյուս բանտարկյալներից առանձին և ստիպված են կատարել նվաստացնող աշխատանք ու մատուցել սեռական ծառայություններ:

Վարչաքարտություն. Իշխանությունները նախատեսված կարգով չեն կատարել վստահելի քննություններ, և չեն ձեռնարկել քայլեր իմաստալի լուծումներ տալու բանտարկյալների նկատմամբ վատ վերաբերմունքի, բանտարկյալների միջև վեճերի ու բռնության և համատարած կոռուպցիայի խնդիրներին: Շարունակում էր մտահոգիչ մնալ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ու առողջական վիճակով պայմանավորված վաղաժամկետ ազատելու համակարգը՝ օրենսդրության ու իրականացման ասպարեզում առկա համակարգային բացերի հետևանքով: Դատապարտյալներն ու կալանքի տակ գտնվողները միշտ չէ, որ ապահովվում էին տեսակցությունների ողջամիտ հնարավորություններով՝ տեսակցության համար հարմար տարածքների բացակայության հետևանքով: Բանտերի ու կալանավայրերի ղեկավարներն իրենց հայեցողությամբ կամայականորեն կարող էին բանտարկյալներին ու կալանքի տակ գտնվողներին մերժել տեսակցությունները, ընտանիքի հետ կապ հաստատելու ու պարբերականներ ստանալու հնարավորությունները:

Բանտերը չունեին օմբուդսմեն, իսկ բանտարկյալների համար չկային արդյունավետ մեխանիզմներ հաղորդելու անազատության պայմանների հետ կապված խնդիրների մասին: Իրավասու մարմինները միշտ չէ, որ թույլ են տվել բանտարկյալներին և կալանավորներին իշխանություններին ներկայացնել անմարդկային պայմանների մասին արժանահավատ բողոքներ առանց գրաքննության:

Անկախ մշտադիտարկում. Իրավասու մարմիններն, ընդհանուր առմամբ թույլատրել են տեղական և միջազգային իրավապաշտպան խմբերին, այդ թվում՝ ԽԿԿ-ին, իրականացնել բանտերի և կալանավայրերի պայմանների մշտադիտարկում, և նրանք դա կանոնավոր կերպով իրականացրել են: Իրավասու մարմինները դիտորդներին թույլատրել են առանձնազրույցներ ունենալ բանտարկյալների հետ: Իրավասու մարմինները թույլատրել են Կարմիր խաչի միջազգային կոմիտեին այցելել բանտեր և նախնական կալանքի կենտրոններ:

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Նկատվել է մի բացառություն. քրեակատարողական հիմնարկների իրավասուները շարունակել են մերժել ՀԴԽ դիտորդների մուտքը կալանքի տակ գտնվող որոշ անձանց, այդ թվում՝ «Սասնա Շոեր» զինված խմբի որոշ կալանավորված անդամների մոտ:

դ) Կամայական ձերբակալություն կամ կալանավորում

Թեպետ օրենքով արգելվում է կամայական ձերբակալումը և կալանավորումը և սահմանվում ձերբակալության կամ կալանքի օրինականությունը դատարանում վիճարկելու իրավունք յուրաքանչյուրի համար, ոստիկանները հաճախ կամայականորեն բերման են ենթարկել քաղաքացիներին, այդ թվում՝ ցույցերի մասնակիցներին:

Ոստիկանության և անվտանգության համակարգի դերը

Ազգային ոստիկանությունը պատասխանատու է ներքին անվտանգության համար, մինչդեռ Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) պատասխանատու է ազգային անվտանգության, հետախուզական գործունեության, սահմանային հսկողության համար: Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔՕ) առանձին կառույց է, որն իրականացնում է նախաքննություն պետական պաշտոնյաների հնարավոր չարաշահումների հետ կապված քրեական գործերով: Քննչական կոմիտեն պատասխանատու է քրեական գործերով մինչդատական քննությունների համար և քննչական ծառայությունների իրականացման համար: Մինչ քննչական կոմիտեին գործը հանձնելը ոստիկանության կողմից իրականացվում է նախաքննություն և կալանավորումներ: Այս բոլոր կառույցների ղեկավարներն էլ նշանակվում են երկրի նախագահի կողմից:

Քաղաքացիական իշխանությունները պահպանել են արդյունավետ վերահսկողություն ԱԱԾ-ի, ՀՔՕ-ի, և Քննչական կոմիտեի նկատմամբ, սակայն կառավարությունը չունի արդյունավետ միջոցներ չարաշահումները քննելու և պատժելու համար: Օրենքի ընտրովի կիրառումը և լայն իշխանությամբ օժտված իրավապահ մարմինների ներկայացուցիչների անպատժելիությունը խնդրահարույց էին: Բազմաթիվ դեպքերում տարվա ընթացքում, իրավապահ մարմինները հրաժարվել են քրեական հետապնդում իրականացնել կառավարության հետ կապ ունեցող աղմկահարույց գործերով ներգրավված անձանց նկատմամբ:

Ձերբակալության ընթացակարգեր և վերաբերմունքը կալանքի ընթացքում

Չնայած օրենքն իրավապահ պաշտոնյաներից պահանջում է կարգադրագիր ձեռք բերել և ձերբակալություն իրականացնել ողջամիտ կասկած ունենալու դեպքում, իրավասու մարմինները ժամանակ առ ժամանակ կասկածյալներին ձերբակալել են առանց կարգադրագրի և առանց ողջամիտ կասկածի: Օրենքի համաձայն քննություն իրականացնող մարմինն անձին բերման ենթարկելուց հետո երեք ժամվա ընթացքում պարտավոր է կամ

ձերբակալել այդ անձին, կամ ազատ արձակել: Անձին արգելանքի վերցնելուց հետո 72 ժամվա ընթացքում քննություն իրականացնող մարմինը պարտավոր է կամ ազատել ձերբակալված անձին, կամ մեղադրանք առաջադրել և կալանքի տակ պահելու կարգադրագիր ստանալ դատավորից: Դատավորները հազվադեպ են մերժել ոստիկանության կալանքի կարգադրագրի հայտերը կամ քննության առել ոստիկանության պահվածքը ձերբակալությունն իրականացնելիս: Ըստ դիտորդների՝ ոստիկանությունը ճշգրիտ գրառումներ չի վարել և բերման ենթարկելու կամ ձերբակալելու մասին արձանագրությունները կամ հետին ամսաթվով է թվագրել կամ չի լրացրել:

Օրենքը ոստիկանությունից պահանջում է տեղեկացնել արգելանքի վերցված անձանց իրենց բերման ենթարկելու կամ ձերբակալելու պատճառների, ինչպես նաև լռություն պահպանելու, փաստաբան ունենալու, հեռախոսագանգ կատարելու և ձերբակալության պահից սկսած փաստաբանի կողմից ներկայացված լինելու նրանց իրավունքների մասին: Գրավով ազատ արձակելու տարբերակ սահմանված է, սակայն դատավորներն այն հազվադեպ ու ընտրովի մոտեցմամբ են կիրառում: Գործնականում դատական համակարգը և իրավապահ կառույցները խափանման միջոցը որոշելիս ապացուցման բեռը դնում են կասկածյալների վրա, և նրանք պետք է ի ցույց դնեն, որ փախուստի ռիսկ չկա և իրենք չեն խոչընդոտի քննությանը:

Մեղադրյալները ձերբակալության պահից սկսած իրավունք ունեն ունենալ փաստաբան, իսկ անվճարունակ լինելու դեպքում արգելանքի վերցված անձն օրենքով իրավասու է ունենալ հանրային պաշտպան: Ըստ իրավապաշտպան դիտորդների կալանավորվածներից քչերն են իմացել փաստաբան ունենալու իրենց իրավունքի մասին: Դիտորդները նշում էին, որ ոստիկանությունը հաճախ խուսափում էր ապահովել պատշաճ իրավական գործընթացի ներքո ընձեռվող իրավունքների ապահովումը՝ պաշտոնապես ձերբակալելու փոխարեն քաղաքացիներին կանչելով և պահելով որպես գործով անցնող վկաներ և ոչ կասկածյալներ: Այս կերպ ոստիկանությունը կարողացել է այդ անձանց հարցաքննել՝ շրջանցելով փաստաբան ունենալու նրանց իրավունքը:

ԽԿԿ-ն իր 2016թ. հաշվետվության մեջ ներկայացնում էր, որ կիրառվում է մի պրակտիկա, երբ անձը «հրավիրվում է» (սովորաբար հեռախոսագանգով) ոստիկանություն ոչ ֆորմալ գրույցի: Այդ գրույցները կարող են տևել մի քանի ժամ և անգամ օրեր, քանզի այս մարդկանցից փորձ է արվում կորզել խոստովանություն կամ ստանալ իրեղեն ապացույցներ՝ մինչ նրանց որպես կասկածյալ ներգրավելն ու իրենց իրավունքներին ծանոթացնելուց հետո հարցաքննելը:

Կամայական ձերբակալություն. Ըստ միջազգային կազմակերպությունների ու իրավապաշտպան դիտորդների՝ ոստիկանությունը, ԱԱԾ անձնակազմը հաճախ արգելանքի տակ է վերցրել կամ ձերբակալել է մարդկանց՝ առանց կարգադրագրի կամ հավանական պատճառի: Իրավապաշտպան կազմակերպությունները նշում էին, որ ձերբակալությունները հաճախ եղել են քննություն սկսելու նպատակով, հաճախ այն ակնկալիքով, որ կասկածյալը կխոստովանի և կվերանա հետագա քննության անհրաժեշտությունը:

Մարդու իրավունքների գեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Նախնական կալանք. Նախնական կալանքի երկար տևողությունը շարունակել է հանդիսանալ քրոնիկ խնդիր: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ նոյեմբերի 1-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց գրեթե 35 տոկոսը եղել են նախնական կալանքի տակ գտնվողները: Ըստ Արդարադատության նախարարության տարվա առաջին 10-ն ամիսների ընթացքում առաջին աստանի դատարանների կողմից ստացվել է նախնական կալանքը որպես խափանման միջոց կիրառելու 2022 միջնորդություն, որոնցից 1911-ը բավարարվել են: Նույն ժամանակահատվածում դատարանները ստացել են 1176 միջնորդություն նախնական կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ, որից բավարարվել են 1096-ը. դատարանները նաև ստացել են գրավի դիմաց ազատ արձակելու 567 միջնորդություն, որից բավարարվել է 83-ը: Որոշ դիտորդներ համարում են, որ ոստիկանությունը չափից շատ է օգտագործում նախնական կալանքը՝ որպես մեղադրյալներին խոստովանության դրդելու ու ինքնախոստովանական ապացույցներ ձեռք բերելու միջոց:

Ըստ կառավարության տվյալների 2016թ. «Սասնա Ծռերի» կողմից ոստիկանության գնդի գրավման հետ կապված տարբեր հանցանքների համար ձերբակալվել ու մեղադրվում են 40 քաղաքացիական անձինք. մեղադրանքները ներառում են՝ զանգվածային անկարգությունների կազմակերպում, գույքի վնասում և ոչնչացում, աջակցություն շենքի գրավմանն ու պատանդներ պահելուն: Տարեվերջի դրությամբ պաշտոնապես մեղադրանք էր առաջադրվել ու դատապարտվել էին 15-ը: Մի քանիսը նախնական կալանքից ազատ էին արձակվել, սակայն մյուս քաղաքացիական ցուցարարները շարունակում են մնալ կալանքի տակ 2016թ. հուլիսից սկսած, իսկ դատավարությունը շարունակվում է:

Մեկ այլ բարձր հնչեղություն ստացած գործով մարտի 16-ին նախնական կալանքի տակ պահելու փաստի դեմ երեք-չաբաթյա հացադուլ անելուց հետո քաղաքացիական հիվանդանոցում մահացավ Արթուր Սարգսյանը, ում 2016 թ. հուլիսին էրեբունու ոստիկանական գնդի շենքը գրավելու օրերին «Սասնա Ծռերին» ուտելիք տանելու համար կոչել էին «Հաց բերող»: Սարգսյանը ձերբակալվել էր 2016թ. հուլիսին ու պահվում էր կալանքի տակ զինված խմբին աջակցելու մեղադրանքով: Նա ազատ արձակվեց 2016թ. դեկտեմբերին, սակայն փետրվարի 9-ին նա կրկին կալանավորվեց՝ քննչական կոմիտե չներկայանալու համար: Ըստ մամուլում տեղ գտած հրապարակումների Սարգսյանն ուներ բազմակի առողջական խնդիրներ, որոնք ըստ օրենքի անհամատեղելի էին բանտարկության հետ: Ըստ հաղորդումների առաջին անգամ կալանքից նրան ազատ էին արձակել այն բանից հետո, երբ ՄԻԵԴ հարցում էր ուղարկել կառավարությանը նրա առողջական վիճակի մասին: Նրա մահին հաջորդող օրերի ընթացքում, հարյուրավոր ցուցարարների կարծիքով Սարգսյանը մահացավ, քանի որ կառավարությունը մերժել էր փաստաբանների նախնական հորդորները նրան ազատ արձակելու կալանքից առողջական հիմքերով: Մարտի 31-ին քրեական գործ հարուցվեց Սարգսյանին բուժող բժիշկների գործողությունների հետ կապված, սակայն դատախազության

որոշմամբ գործի հետ առնչություն ունեցող քննիչների, դատավորների և քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների գործողությունների մասով քրեական գործ չհարուցվեց:

Կալանքի չարաշահումն առկա է եղել նաև անչափահասների դեպքում: Ըստ Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի քրեական արդարադատության համակարգում անչափահասներն առավել խոցելի էին ու պաշտպանված չէին իրենց իրավունքների ոտնահարումներից:

Թեպետ օրենքը պահանջում է լավ պատճառաբանված հիմնավորվում կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամիսը մեկ երկարաձգելու համար, դատավորները, որպես կանոն, երկարաձգել են կալանքն անհասկանալի հիմքերով: Իրավասու մարմինները հիմնականում հարգել են օրենքի այն դրույթը, որով նախնական կալանքը չպետք է, ընդհանուր առմամբ գերազանցի 6 ամիսը՝ սովորական գործերով և 12 ամիսը՝ ծանր գործերի պարագայում: Գործը դատախազի կողմից դատարան ուղարկելուց հետո օրենքով հետագա կալանքի վերաբերյալ ժամկետային սահմանափակումներ չկան, այլ միայն նշվում է դատաքննության «ողջամիտ սևողության» մասին: Դատախազները հաճախակի դատավորներին ներկայացրել են դատը հետաձգելու միջնորդություններ, որոնք բավարարվում են: Դատախազները դատական լսումների ձգձգման համար պատասխանատվությունը դնում են դատապաշտպանների և նրանց՝ պաշպանությանը նախապատրաստվելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու միջնորդությունների վրա: Երկարատև դատաքննությունները նաև պայմանավորված են բոլոր օղակի դատարանների խիստ ծանրաբեռնվածությամբ:

Կալանքի տակ գտնվողի կողմից կալանքի օրինաչափությունը դատարանում վիճարկելու կարողությունը. Ըստ իրավական փորձագետների կասկածյալները չեն ունեցել գործնական հնարավորություն իրենց ձեռքակալության օրինականությունը բողոքարկելու համար: Այն դեպքերում, երբ մեկ դատարան արդեն վճիռ է կայացրել նախնական կալանքի վերաբերյալ, անհավանական էր, որ մեկ այլ դատարան հարցականի տակ դներ այդ որոշումը:

ե) Արդար հրապարակային դատաքննության իրավունքի մերժում

Չնայած օրենքը նախատեսում է անկախ դատական համակարգ, սակայն ընդհանուր առմամբ անկախություն ու անկողմնակալություն դատական համակարգի կողմից ի ցույց չի դրվում: Վարչական դատարաններն համեմատաբար ավելի անկախ են: Մի քանի փաստաբաններ պնդում են, որ Վճռաբեկ դատարանը ստորին ատյանի դատավորներին թելադրել է բոլոր նշանակալի գործերի ելքերը: Ըստ որոշ իրավապաշտպան խմբերի Վճռաբեկ դատարանի վերահսկողությունը դատավճիռների նկատմամբ շարունակում էր մնալ որպես դատական անկախության վրա ազդող համապարփակ խնդիր:

Դատավորները շարունակում էին ենթարկվել քաղաքական ճնշումների գործադիր բոլոր օղակների, իրավապահ կառույցների կողմից, ինչպես նաև դատական աստիճանակարգի

շրջանակում: Քանի որ նրանց նշանակումը ցմահ չէ, նրանք խոցելի էին պաշտոնանկ արվելու առումով և չունեին արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ, եթե գործադիր, օրենսդիր կամ վերադաս դատական պաշտոնյաները որոշեին նրանց պատժել:

Իրավական փորձագետների համաձայն՝ դատարանները պարտավորված են զգում բավարարել նախնական կալանքը որպես խափանման միջոց կիրառելու քննիչների և դատաքննության ընթացքում կալանքը երկարաձգելու դատախազների ներկայացրած միջնորդությունները. ըստ իրավական փորձագետների այս պրակտիկան խաթարում է դատական անկախությունն ու նպաստում այն տպավորության ձևավորմանը, որ դատարանները սուկ գործիք են, իսկ կալանքի տևողության հարցն իրականում որոշում են քննիչները: Ըստ իրավաբանների՝ անկախ որոշումների կայացման համար որոշ դատավորների հեռացման դեպքերը շարունակում են սթափեցնող ազդեցություն ունենալ դատական համակարգի վրա:

Իրավասու մարմիններն ընդհանուր առմամբ հետևել են դատական որոշումներին:

Թե՛ դատախազները, թե՛ փաստաբանները հաճախ չեն հետևել ընթացակարգային ստանդարտներին: Դատավորներն իրավասու չեն կարգապահական միջոցներ կիրառել փաստաբանների նկատմամբ կամ պահանջել, որ ժամանակին ներկայանան լուսմներին, և կարող են միայն Գլխավոր դատախազությանը և Փաստաբանների պալատին իրենց բողոքները հայտնել: Շատ դատավորներ իրենց հարկադրված են զգում աշխատել դատախազների հետ՝ հասնելու դատապարտման:

ՀԿ-ների հաղորդումների համաձայն դատավորները, որպես կանոն, անտեսել են մեղադրյալների պնդումներն այն մասին, որ ցուցմունքն իրենցից կորզվել է ֆիզիկական բռնության միջոցով: Իրավապաշտպանները շարունակում են մտահոգություն հայտնել այն փաստի վերաբերյալ, որ դատարանները հիմնվում են այնպիսի ապացույցների վրա, որոնք մեղադրյալների պնդմամբ ձեռք են բերվել ճնշման ներքո, հատկապես այն դեպքերում, երբ այդ ապացույցը դատապարտման հիմք է դառնում:

Իրավապաշտպան ՀԿ-ները ներկայացրել են ցմահ բանտարկության դատապարտվածների նկատմամբ թույլ տրված մարդու իրավունքների չարաշահումները: Ըստ այս ՀԿ-ների՝ նման պատժի դատապարտվածներին հնարավորություն չի տրվել, որպեսզի իրենց գործերը դատական կարգով ըստ էության վերանայվեն, այն դեպքերում, երբ քրեական օրենսդրության մեջ եղել են փոփոխություններ, որոնք կփոխեին նրանց ցմահ բանտարկությունն ավելի մեղմ պատժով: Ըստ իրավապաշտպան խմբերի՝ ցմահ դատապարտվածների մասով արդարադատության ապահովման հարցում ամենամեծ խոչընդոտներից էր այն, որ դատարանի կարգադրությամբ գործի նյութերն ու իրեղեն ապացույցները ոչնչացվում էին: Սա դատապարտյալներին զրկել է նոր տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող

քրեափորձաքննությունների, օրինակ՝ ԴՆԹ փորձաքննության հիման վրա իրենց գործը վերանայելու հնարավորությունից:

Դատաքննություն

Սահմանադրությամբ և օրենքներով սահմանվում է արդար և հրապարակային դատաքննության իրավունք, սակայն դատական համակարգը մեծամասամբ չի ունեցել անկախություն այս իրավունքն իրացնելու համար:

Օրենքով սահմանվում է անմեղության կանխավարկածը, սակայն կասկածյալների այս իրավունքը սովորաբար չի հարգվել: Դատավարությունների ժամանակ իրավասու մարմիններն ամբաստանյալներին մանրամասնորեն ներկայացրել են նրանց առաջադրված մեղադրանքները, և օրենքը պահանջում է ըստ անհրաժեշտության ապահովել անվճար թարգմանություն ոչ-հայախոս ամբաստանյալների համար:

Օրենքով պահանջվում է, որ հիմնականում դատական լուսմները լինեն դոմբաց, սակայն առանձին դեպքերում, մասնավորապես՝ «հանրության բարքերի», պետական անվտանգության կամ «մասնակիցների անձնական կյանքի պաշտպանության» շահերից ելնելով լինում են բացառություններ: Ամբաստանյալներն ունեն իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք, իսկ պետությունը պարտավոր է ամբաստանյալներին հանրային պաշտպան առաջարկել, եթե նրանք դա պահանջում են: Պաշտպանների թվի սղության պատճառով երբեմն այս պարտավորության իրականացումը Երևանից դուրս չի ապահովվել:

Օրենքի համաձայն ամբաստանյալները կարող են պահանջել առերեսում վկաների հետ, ներկայացնել ապացույցներ, ծանոթանալ գործի նյութերին նախքան դատավարությունը, սակայն ամբաստանյալներն ու նրանց փաստաբանները շատ սահմանափակ հնարավորություն են ունեցել առարկություններ ներկայացնելու պետական մեղադրողի կողմից ներգրավված վկաներին կամ ոստիկաններին, մինչդեռ դատաբանները կանոնավոր կերպով հակված են եղել ընդունել մեղադրող կողմի նյութերը: Մասնավորապես՝ օրենքն արգելում է ոստիկաններին ի պաշտոնե ցուցմունք տալ, եթե նրանք չեն հանդիսանում գործով վկա կամ տուժող: Դատավորները չէին ցանկանում ընդունել առարկություններ կապված ոստիկանության փորձագետների հետ՝ խոչընդոտելով ամբաստանյալի պատշաճ պաշտպանության հնարավորությանը: Քրեական գործերում դատավորների վերահսկողությունը վկաների ցանկի ու հնարավոր վկաներին հրավիրելու նպատակահարմարության որոշման հարցերում նույնպես խոչընդոտ է եղել պաշտպանության համար: Պաշտպանությունը ներկայացնող փաստաբանները բողոքում էին, որ երբեմն դատավորներն իրենց թույլ չեն տվել կանչել պաշտպանության վկաներին: Ըստ փաստաբանների և տեղական ու միջազգային իրավապաշտպան դիտորդների, այդ թվում և

Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի՝ մեղադրող կողմը քրեական արդարադատության համակարգում գերիշխող դիրք է զբաղեցրել:

Ըստ ՀԿ-ների հաղորդումների «Սասնա Շոերի» և այլ մեծ հնչեղություն ստացած գործերի դատաքննության ընթացքում իրավասու մարմինների վերաբերմունքը պաշտպանության կողմից փաստաբանների ու ամբաստանյալների հանդեպ գրկել է ամբաստանյալներին արդար դատաքննության իրենց իրավունքից: Օրինակ՝ հուլիսի 11-ին իր «Արդարադատության ձգնաժամը» գեկույցում Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ-ը նշել էր, որ իրավասու մարմինները «Սասնա Շոերի» գործով և 4 այլ գործերով ոտնահարել են արդար դատաքննության իրավունքը՝ միջամտելով ու խոչընդոտելով պաշտպանների մասնագիտական գործունեության իրականացմանը, կատարելով ոտնձգություններ պաշտպանների նկատմամբ, թույլ տալով բռնություն ու ոտնձգություններ ամբաստանյալների նկատմամբ և ջանալով սահմանափակել քաղաքացիների ներկայությունը դատական լսումներին, այդ թվում՝ մեկ անգամ դատախազության կողմից: Պաշտպանների նկատմամբ ոտնձգություններն Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ-ը վերագրում է այն միտմանը, որ պաշտոնյաները պաշտպաններին նույնականացնում են նրանց պաշտպանյալների հետ:

Օգոստոսի 9-ին Քաղաքացիական համերաշխության հարթակը, որն իրավապաշտպան ՀԿ-ների միջազգային ցանց է, անդրադարձավ այն մտահոգությանը, որ բարձր հնչեղություն ստացած գործերում ներգրավված պաշտպանները ենթարկվել են ոտնձգությունների ու պետության գործակալների կողմից նրանց համար խոչընդոտներ են ստեղծվել: Ըստ Քաղաքացիական համերաշխության հարթակի «Սասնա Շոերի» և նմանատիպ հնչեղություն ստացած գործերում ներգրավված փաստաբաններին թույլ չի տվել այցելել իրենց պաշտպանյալներին կալանավայրում և հնարավորություն չի տրվել նրանց հետ առանձնազրույցներ ունենալ: Այլ դեպքերում քրեակատարողական հիմնարկի պաշտոնյաներն ըստ հաղորդումների փաստաբանի հետ հանդիպումից հետո խուզարկել են մեղադրյալներին և առգրավել ու ոչնչացրել հանդիպման հետ կապված նրանց գրառումները: Որոշ պաշտպաններ դատարան ժամանելիս ենթարկվել են երկարատև ու տհաճ անվտանգության զննման: Երբ փաստաբանները դժգոհեցին այս զննումներից՝ համարելով դրանք անօրինական, դատավորներն արգելեցին նրանց ներկա գտնվել լսումներին՝ արդյունավետ կերպով թույլ չտալով, որ նրանք ապահովեն պաշտպանություն իրենց պաշտպանյալի համար: Ապա՝ նախագահողը Փաստաբանների պալատից պահանջեց կարգապահական տույժեր կիրառել բացակա դատապաշտպանների համար: Նման պահանջներ եղան նաև, երբ դատապաշտպանները հրաժարվեցին ներկա գտնվել դատական լսումներին այն բանից հետո, երբ դատարանի կանոնները խախտելու համար դատավորը դատարանի դահլիճից ժամանակավորապես հեռացրեց նրանց պաշտպանյալներին:

Սեպտեմբերի 13-ին 184 փաստաբաններ գործադուլ արեցին՝ իրենց դժգոհությունը հայտնելով անվտանգության զննումների վերաբերյալ:

Ամբաստանյալները, դատախազները և տուժողները դատավճռի բողոքարկման իրավունք ունեն և հաճախ իրացնում են այդ իրավունքը:

Ակնկալվել է, որ դատավորներն ամբաստանյալին ցանկացած պարագայում մեղավոր են ճանաչելու, և դատարան ուղարկված քրեական գործերի գերակշիռ մեծամասնությունն ավարտվել է դատապարտմամբ:

Հուլիսի 18-ից Քրեական վերաքննիչ դատարանը բեկանեց արդարացման սակավաթիվ գործերից մեկը, որով դատավորը 2015թ. արդարացրել էլ Դավիթ Հովակիմյանի հանդեպ սպանության փորձի մեջ մեղադրվող ամբաստանյալ Կարեն Կունգուրցևին: Լրացուցիչ մեղադրանքներ առաջ քաշելով նրան դատապարտեցին 7 տարվա ազատազրկման: Ըստ Կունգուրցևի փաստաբանների՝ դատավորները վճիռ էին կայացրել դատարանում չուսումնասիրված հավաստիացումների հիման վրա՝ նպատակ ունենալով քողարկել հանցանքի իրական մեղավորին: Տուժողի ընտանիքը շարունակում էր պաշտպանել Կունգուրցևի անմեղության մասին պնդումները՝ համոզված, որ Դավիթ Հովակիմյանի իրական սպանողը եղել է ԱԱԾ-ի պաշտոնյայի որդի, և վերջինս օգտագործելով իր դիրքը ներագդել է ոստիկանության ու դատախազության վրա և հանցանքը մեղաագրվել է Կունգուրցևին:

Քաղաքական բանտարկյալներ և կալանավորվածներ

Ըստ տեղի իրավապաշտպան ՀԿ-ների երկրում եղել են քաղաքական բանտարկյալներ ու կալանավորներ, սակայն արդեն դատարան հասած շատ գործերում բռնություն կիրառելու մեղադրանքներ են եղել: Մի քանի դեպքեր, որոնց վերաբերյալ եղել են քաղաքական շարժառիթներով պայմանավորված լինելու մեղադրանքներ, եղել են ընթացքի մեջ ՄԻԵԴ-ում: Հյուսիսային Վոտչը կառավարությանը կոչ արեց «հրապարակել բողոքի ակցիաների կազմակերպիչների ու մասնակիցների դեմ լուրջ քրեական մեղադրանքները հիմնավորող բոլոր արժանահավատ ապացույցները: Իշխանությունները չպետք է քրեական հետապնդում իրականացնեն ցուցարարների հանդեպ ու երկար ժամկետով ազատազրկեն նրանց՝ հաշվեհարդար տեսնելով նրանց հետ հնչեղ, բայց խաղաղ ակտիվիզմի համար»:

Քաղաքացիական դատավարություն ու դատական պաշտպանության միջոցներ

Թեպետ քաղաքացիները մարդու իրավունքների ենթադրյալ ոտնահարման դեպքում վնասի փոխհատուցման կամ ոտնահարումը դադարացնելու հայցերով իրավասու են դիմել դատարաններ, դատարանները լայնորեն ընկալվում են որպես կոռումպացված կառույց: Քաղաքացիները նաև հնարավորություն ունեն վիճարկել հիմնարար իրավունքներն ու ազատությունները խախտող օրենքների կամ օրենսդրական ակտերի

սահմանադրականությունը Սահմանադրական դատարանում: Ըստ փաստաբանների՝ ստորին ատյանի դատարանները չեն հետևում Վճռաբեկ դատարանի, ՄԻԵԴ-ի և Սահմանադրական դատարանի նախադեպերին: Արդյունքում, առաջին ատյանի դատարանները շարունակում են գործել միևնույն սխալները: Ըստ փաստաբանների՝ թեև քաղաքացիական և վարչական վարույթներն առավել անկախ են, սակայն դատական անկախության բացակայությունը քրեական վարույթներում ստվերում ու վարկաբեկում է արդարադատության ողջ համակարգը:

Տեղում իրավական կարգավորման միջոցները սպառելուց հետո քաղաքացիները պետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ իրենց գանգատները կարող են ներկայացնել ՄԻԵԴ-ին: Պետությունն ընդհանուր առմամբ կատարում է ՄԻԵԴ-ի վճիռները դրամական փոխհատուցումների մասով, սակայն ՄԻԵԴ-ի կողմից որոշումների կայացումից հետո այդ գործերով բովանդակային վերանայում չի կատարվում: Երբ վճիռ է կայացվում այնպիսի գործով, որի հանդեպ կիրառելի է ՄԻԵԴ-ի նախկին որոշումներից մեկը, դատարանները հաճախ չեն հետևում կիրառելի ՄԻԵԴ նախադեպերին:

զ) Կամայական կամ ապօրինի միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիության կամ նամակագրության գաղտնիության նկատմամբ

Սահմանադրությամբ արգելվում են չարտոնված խուզարկությունները և ամրագրվում է քաղաքացիների անձնական կյանքի և հաղորդակցության գաղտնիությունը: Իրավապահ կառույցները միշտ չէ, որ հետևել են այս արգելքներին:

Իրավապահ մարմինները չեն կարող օրինականորեն հեռախոսային խոսակցությունները լսել, նամակագրությանը հետևել կամ խուզարկություն կատարել, եթե դատավորից չեն ստացել նման թույլտվություն, որը պետք է հիմնված լինի հանցավոր գործողությունների մասին համոզիչ ապացույցների վրա: Սահմանադրությամբ սակայն նախատեսվում են բացառություններ, երբ հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել առանց դատական կարգադրագրի, երբ անհրաժեշտ է պաշտպանել պետական անվտանգությունը, և պայմանավորված հաղորդակցության մաս կազմողների հատուկ կարգավիճակով: Չնայած իրավապահ մարմիններն, ընդհանուր առմամբ, հետևել են այս իրավական ընթացակարգին, սակայն փաստաբանները պնդում են, որ դատավորները հաճախ գաղտնալսման, նամակագրությանը հետևելու ու խուզարկության թույլտվությունները շնորհելիս չեն պահանջում ներկայացնել հանցավոր գործունեության հիմնավոր ապացույցներ, ինչը պահանջվում է օրենքով, ընդհանուր առմամբ սահմանված իրավական ընթացակարգը դարձնելով սուսկ ձևականություն: Ըստ հաղորդումների իշխանություններն իրականացրել են հեռախոսագրույցների գաղտնալսում, էլեկտրոնային փոստի և թվային հաղորդակցության այլ միջոցների վերահսկողություն այն անհատների նկատմամբ, ում

կառավարությունը ցանկացել է պահել հսկողության տակ, այդ թվում՝ իրավապաշտպան ակտիվիստների և քաղաքական գործիչների նկատմամբ: Ըստ որոշ իրավապաշտպան դիտորդների՝ իշխանություններն ունեցել են ակտիվիստների, քաղաքական գործիչների և այլ անձանց «դուսյեներ», որոնք օգտագործել են անձի հանդեպ ճնշումներ գործադրելու համար:

ՄԱՍ 2. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

ա) Խոսքի, այդ թվում և մամուլի ազատություն

Երկրի սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է խոսքի, այդ թվում և մամուլի ազատությունը, սակայն կառավարությունը փորձել է ներագդել լրատվամիջոցների վրա՝ ապահովելու բարեհաճ ու քննադատություն չպարունակող լուսաբանումներ: Հեռարձակող լրատվամիջոցներն ու մեծ շրջանառություն ունեցող տպագիր լրատվամիջոցները, ընդհանուր առմամբ, արտահայտել են կարծիքներ, որոնք հաճո են իրենց սեփականատերերի կամ գովազդատուների համար, որոնք պետական պաշտոնյաներ կամ հարուստ գործարարներ են, իսկ առցանց և տպագիր լրատվամիջոցներն առավել քննադատական են եղել իրենց լուսաբանումներում: Եղել են բռնության մի քանի դեպքեր ընդդեմ լրագրողների՝ կապված ընտրությունների ու տեղի այլ զարգացումների լուսաբանման հետ:

Մամուլի ու լրատվամիջոցների ազատություն. Հեռարձակող լրատվամիջոցներն ու մեծ շրջանառություն ունեցող տպագիր լրատվամիջոցները, ընդհանուր առմամբ, չեն ապահովել քաղաքական բազմակարծություն ու օբյեկտիվ լուսաբանում: Հեռարձակող լրատվամիջոցների և լրագրերի գերակշիռ մասը մասնավոր անձանց կամ խմբերի են պատկանում և հակված են արտացոլել իրենց սեփականատերերի, որոնք հաճախ իշխանական օղակներին մոտ կանգնած անձինք են, քաղաքական դիրքորոշումները և ֆինանսական շահերը: Հեռարձակող լրատվամիջոցները, հատկապես հանրային հեռուստատեսությունը շարունակում էին մնալ որպես նորությունների ու տեղեկատվության ստացման առաջնային աղբյուր բնակչության մեծ մասի համար: Հեռարձակող լրատվամիջոցների մեծ մասը պատկանում էին իշխանական կուսակցության քաղաքական գործիչներին կամ քաղաքական կապեր ունեցող գործարարներին և հակված էին չքննադատել կառավարության քաղաքականությունն ու գործունեությունը:

Եղել են դեպքեր, երբ պաշտոնյաները թույլ չեն տվել մամուլին լուսաբանել որոշ իրադարձություններ և տեղեկություններ: Մարտին «Ազատություն» ռադիոկայանի տեղական ծառայությանը թույլ չտրվեց լուսաբանել Հայաստանի և Ռուսաստանի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարների բանակցությունները: Երբ Ռուսաստանի դեսպանը նիստին նկատեց «Ազատություն» ռադիոկայանի լրագրողին, ըստ հաղորդումների նա հարցրեց՝ ինչ է անում «Ազատություն» ռադիոկայանն այնտեղ: Դրանից հետո Հայաստանի

անվտանգության խորհրդի պաշտոնյան «Ազատություն» ռադիոկայանի նկարահանող խմբին թույլ չտվեց մուտք գործել հյուրանոց, չնայած 6 այլ լրատվամիջոցներ (երեք հայկական և երեք ռուսական) այնտեղ էին՝ լուսաբանելու այդ միջոցառումը:

Անկախ լրատվամիջոցները, հիմնականում՝ առցանց լրատվամիջոցներն ինքնաբավ չեն և գոյատևում են միջազգային դրամաշնորհների հաշվին և ունեն խիստ սահմանափակ եկամուտներ գովազդից: Գովազդատուները հաճախ խուսափում են գովազդ տեղադրել այնպիսի կայքերում, որոնք քննադատական մոտեցում ունեն կառավարության հանդեպ՝ համարելով, որ նման օժանդակությամբ կարող են պաշտոնական ճնշումների առիթ տալ:

Ըստ մեդիա փորձագետների հեռուստատեսային և առցանց գովազդի շուկայում մի քանի ընկերությունների ունեցած գերիշխող դիրքը սահմանափակել է կարծիքների բազմազանությունը: 2016թ. սեպտեմբերին Քաղաքական և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոնի ներկայացրած զեկույցի համաձայն «Մեդիա Ինթերնեյշնլ Սերվիսիզ» սելյս հաուսը միջինում տիրապետում է երկրի հեռուստաալիքների գովազդային համախառն բյուջեների 74 տոկոսին և ունի երկրի ամենադիտված հինգ հեռուստաալիքներով գովազդի վաճառքի բացառիկ իրավունքներ: Մեկ այլ ընկերություն՝ «Դի Ջի սելյզը», որի վերահսկիչ բաժնեմասը պատկանում է «Մեդիա Ինթերնեյշնլ Սերվիսիզի» բաժնետերերին, վերահսկում է առցանց գովազդային շուկայի ավելի քան մեկ երրորդը՝ գործելով գրեթե նույն կերպ, ինչ «Մեդիա Ինթերնեյշնլ Սերվիսիզը»:

Մարզային հեռուստաընկերությունները ներկայացնում էին այլընտրանքային որոշ դիրքորոշումներ՝ հաճախ արտաքին արտադրության նյութերի միջոցով: Տարեվերջի դրությամբ 10-ը մարզային հեռուստաընկերությունները գտնվում էին փակման վտանգի առաջ՝ պայմանավորված 2016թ. հոկտեմբերին անալոգային հեռարձակումից պարտադիր թվային հեռարձակման անցնելու հանգամանքով: Թեպետ օրենքում կատարված փոփոխությամբ մարզային հեռուստաընկերությունները, որոնք չունեին լիցենզիա պետության կողմից ֆինանսավորվող մուլտիպլեքսի միջոցով հեռարձակում իրականացնելու համար, կարող էին շարունակել անալոգային հեռարձակումը մինչև մասնավոր մուլտիպլեքսի մուտքը շուկա, սակայն վերջինիս համար սահմանված պահանջները չափազանց խիստ էին, որպեսզի որևէ ընկերություն հայտ ներկայացներ: Խնդրին բախված մարզային հեռուստակայանները շարունակում էին հեռարձակումը փոքր հեռուստալսարանի համար՝ մալուխային հեռարձակմամբ, սակայն գովազդից ստացվող եկամուտների կորուստը լուրջ ֆինանսական սահմանափակում էր նրանց համար:

Իշխանությունները, ընդհանուր առմամբ, չեն վերահսկել առցանց լրատվամիջոցների բովանդակությունը, որը սոցիալական մեդիայի հետ միասին հանդիսացել է այլընտրանքային լրատվության և բազմազան քաղաքական դիրքորոշումների ներկայացման կարևոր աղբյուր: Այնուհանդերձ, առցանց լրատվամիջոցներում շարունակվել են ավելի ու ավելի շատ նկատվել քաղաքական կապեր ունեցող սեփականատերերի ու գովազդատուների ազդեցության

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

նշաններ: Եղել են արժանահավատ հաղորդումներ առ այն, որ ն՛ առցանց, ն՛ հեռարձակող լրատվամիջոցները եղել են իշխանություններին մոտ կանգնած մի քանի անհատների ձեռքում: Շարունակել է ոչ թափանցիկ մնալ մեդիաոլորտի ընկերությունների սեփականատերերի հարցը:

Բռնություն և ոսնձգություններ. Ապրիլի 2-ի խորհրդարանական և մայիսի 14-ի Երևան քաղաքի ավագանու ընտրությունների ընթացքում եղել են լրագրողների նկատմամբ բռնության ու մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու մի քանի դեպք: 2016թ. դեպքերով քննությունները, երբ ոստիկանները զանգվածային ցույցերը լուսաբանող լրագրողների նկատմամբ կիրառել էին բռնություն ու կոտրել նրանց մասնագիտական սարքավորումները, դեռ ընթացքի մեջ էին: Իրավասու մարմինների կողմից որևէ ոստիկանի մեղադրանք չէր առաջադրվել այդ միջադեպերի ժամանակ լրագրողների դեմ բռնություն կիրառելու համար: Մեդիաոլորտի դիտորդ խմբերը քննադատում էին քննությունների դանդաղ ու անարդյունավետ ընթացքը՝ չնայած այն հանգամանքին, որ առկա էին ոստիկանության կողմից կատարված բռնությունը փաստագրող բազմաթիվ ձայնագրություններ և տեսանյութեր: Երկիր կատարած այցի ժամանակ ԵԱՀԿ Մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Հարլեմ Դեսիրը շեշտադրեց լրագրողների աշխատանքի ապահով պայմանների անհրաժեշտությունը:

Խորհրդարանական և ավագանու ընտրությունների ժամանակ եղան լրագրողների հանդեպ բռնության մի քանի դեպքեր: Այսպես՝ ապրիլի 2-ին «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Սիսակ Գաբրիելյանի վրա հարձակում էր տեղի ունեցել ՀՀԿ-ական թեկնածու Հակոբ Բեգլարյանի ընտրական շտաբում, ուր նա փորձել էր նկարահանումներ անել այն բանից հետո, երբ նկատել էր, որ մարդիկ այնտեղից հեռանում էին կարծես կաշառք ստացած: Նույն օրն ավելի ուշ «Արարատնյուզի» լրագրող Շողիկ Գալստյանի և Սիսակ Գաբրիելյանի նկատմամբ հարձակում տեղի ունեցավ նույն այդ ընտրական շտաբի մոտակայքում, որտեղ նրանք կրկին փորձում էին նկարահանումներ անել: Ըստ հաղորդումների Բեգլարյանի աջակիցները նրանց ծեծի էին ենթարկել և վերցրել նրանց տեսախցիկները: Հատուկ քննչական ծառայությունը որոշեց շտաբի ներսում Գաբրիելյանի հետ տեղի ունեցած միջադեպով քննություն չսկսել՝ նկատելով, որ լրագրողն իրավասու չէր մուտք գործել շենք: Իրավապահները նաև նշեցին, որ ընտրական շտաբում բաժանված գումարն աշխատավարձեր էին, և ոչ ընտրակաշառք: Այնուհանդերձ, երկրորդ միջադեպի հետ կապված, որտեղ նաև «Արարատնյուզի» լրագրողն էր ընդգրկված, Հատուկ քննչական ծառայությունը քրեական գործ հարուցեց: Իրավասու մարմինները մեղադրանք ներկայացրեցին երկու հոգու՝ Լևոն Գալստյանին և Ջուլիետա Կոկոլյանին՝ լրագրողների դեմ բռնություն կիրառելու և նրանց մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու համար: Տարեվերջի դրությամբ գործով դատաքննությունը դեռ ընթացքի մեջ էր:

Հուլիսի 28-ին մեդիատորի 9-ն ազդեցիկ դիտորդ կազմակերպություններ հրապարակավ դատապարտեցին 2016թ. հուլիսին «Սասնա Շոեր» զինված խմբի պահանջներին իրենց համակրանքը հայտնող մարդկանց հանրահավաքի ժամանակ լրագրողների հանդեպ դրսևորված բռնության դեպքերով պաշտոնական քննությունների դանդաղ ընթացքը: Այս 9-ը կազմակերպությունները նշում էին, որ ոստիկանների ու քաղաքացիական հագուստով անձանց թիրախ են դարձել տարբեր ՁԼՄ-ների 27 թղթակից և օպերատոր, որոնցից 19-ը ենթարկվել են ֆիզիկական բռնությունների, 8-ը՝ մասնագիտական գործունեության այլ խոչընդոտումների: Ընդ որում՝ այս ամենը գուցարկվել է լրատվամիջոցների աշխատակիցների ֆոտո և տեսախցիկները միտումնավոր ջարդելով կամ վնասելով, դրանց հիշողության սարքերն առգրավելով և նկարահանված կադրերը ոչնչացնելով: Թեպետ մեղադրանքներ են ներկայացված 8-ը քաղաքացիական անձանց, սակայն տարեվերջի դրությամբ միջադեպերի մասնակից որևէ իրավապահի մեղադրանք ներկայացված չէր: Հանրության պնդումների համաձայն այդ գործողություններին մասնակցել են ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի անվտանգության ծառայության պետը և Գասպարյանի երկու անձնական թիկնապահները: 2016թ. դեկտեմբերին նախագահ Սարգսյանը «Հասարակական կարգի գերազանց պահպանման համար» պարգևատրեց ոստիկանության գործերի հրամանատար Լևոն Երանոսյանին, ով ըստ պնդումների հրաման էր տվել ուժով ցրել ցուցարարներին:

Սեպտեմբերի 28-ին «Լոռի» հեռուստաընկերության գլխավոր խմբագիր Նարինե Ավետիսյանի վրա հարձակում էին գործել, երբ նա փորձել էր նկարահանել ուժեղ անձրևի ժամանակ իրականացվող ասֆալտապատման աշխատանքները: Ըստ Ավետիսյանի՝ Շինպուլս շինարարական ընկերության ղեկավար Տիգրան Նազարյանը և նրա աշխատակիցները բռնություն էին գործադրել Ավետիսյանի հանդեպ՝ իսկ բջջային հեռախոսը և նրան գետնին գցել: Ըստ Ավետիսյանի՝ սա 5-րդ նման հարձակումն է իր հանդեպ և որ այդ դեպքերից և ոչ մեկի պարագայում իրավասու մարմինները մեղավորներին պատասխանատվության չեն ենթարկել: Իրավապաշտպան ՀԿ-ները և մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը դատապարտեցին բռնությունը և պահանջեցին շուտափույթ քննություն անցկացնել: Քննչական կոմիտեն դեպքի առնչությամբ քննություն սկսեց:

2016թ. օգոստոսին, 2015թ. Երևանի կենտրոնում խաղաղ ցույցը ցրելու ժամանակ ոստիկանների կողմից լրագրողներին ծեծի ու բերման ենթարկելու դեպքից ավելի քան մեկ տարի անց, ՀԶԾ-ը հայտարարեց, որ մեղադրանք է առաջադրվել 4 ոստիկանների՝ Դավիթ Փերիխանյանին, Կոստան Բուդադյանին, Տաճատ Նորատունկյանին և Արթուր Այվազյանին: Լրատվական ՀԿ-ները նրանց առաջադրված մեղադրանքները համարում էին ոչ համարժեք, քանի որ ոստիկանության բռնություններից տուժել էին երկու տասնյակից ավել լրագրողներ, ինչը նրանց պնդմամբ տեղի էր ունեցել բարձրաստիճան ոստիկանների հրամանով: Փետրվարի 20-ին դատարանը 500.000 ՀՀ դրամ (1000 ԱՄՆ դոլար) տուգանք նշանակեց Բուդադյանին, Նորատունկյանին և Այվազյանին, սակայն նրանց թույլատրվեց շարունակել

աշխատանքն իրավապահ համակարգում: Փերիխանյանը՝ ուրիշի գույքը միտումնավոր վնասելու ու ոչնչացնելու և լուրջ վնաս պատճառելու համար, տուգանվեց 600.000 ՀՀ դրամի (1200 ԱՄՆ դոլարի) չափով. նա բողոքարկեց որոշումը, սակայն վերաքննիչ բողոքը չբավարարվեց:

Գրաքննություն կամ բովանդակային սահմանափակումներ. Լրատվամիջոցները, մասնավորապես՝ հեռարձակող լրատվամիջոցներն իշխանություններին քննադատող նյութեր ներկայացնելու դեպքում վախենում էին հաշվեհարդարից: Հաշվեհարդարի դրսևորումներ կարող էին լինել դատական հայցերը, հեռարձակման լիցենզիան կորցնելու սպառնալիքը, կամայական հարկային ստուգումները կամ եկամուտների կորուստը, երբ գովազդատուներն իմանում էին, որ լրատվամիջոցը բարեհաճ չի իշխանությունների հանդեպ: Հաշվեհարդարի վախը հանգեցրել է լրատվամիջոցներում ինքնագրաքննության: Հուլիսի 10-ի ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և Մարդու իրավունքների և գրասենյակի (ԺՀՄԻԳ) զեկույցում նշված էր. «լրատվամիջոցների սեփականատերերի անհարկի միջամտությունը խմբագրական անկախությանը հանգեցրեց լրագրողների կողմից ինքնագրաքննության կիրառման և կառավարության գործունեության քննադատական լուսաբանումից խուսափելուն, այդ թվում՝ Հանրային հեռուստաընկերությամբ»:

Զրպարտության/սուտ մատնության օրենքներ. Իրազեկ քաղաքացիների միավորում ՀԿ-ի կողմից ընտրություններում դպրոցների ու մանկապարտեզների տնօրենների կողմից Հանրապետական կուսակցության օգտին քարոզարշավ իրականացնելու հանգամանքը փաստող ձայնագրությունները մարտին հրապարակելուց կարճ ժամանակ անց իշխանամետ «Իրավունք» օրաթերթը հրապարակեց Իրազեկ քաղաքացիների միավորման ծրագրի ղեկավար Դանիել Իոննիսյանին և նրա ընտանիքին վերաբերող անձնական տվյալներ, որոնք հասանելի են միայն իրավապահ կառույցներին: Թեպետ Քննչական կոմիտեն քրեական գործ հարուցեց արտահոսքի փաստով, սակայն հետո այն կարճվեց՝ մեղավորներին չգտնելու հիմքով: Հանրապետական կուսակցության ներկայացուցիչների հանրային աջակցությամբ Իրազեկ քաղաքացիների միավորման հրապարակման մեջ հիշատակված տնօրեններից 30-ը զրպարտության մեղադրանքով հայց ներկայացրեցին ընդդեմ Իոննիսյանի՝ յուրաքանչյուրը պահանջելով 2 միլիոն ՀՀ դրամ (4000 ԱՄՆ դոլար) որպես փոխհատուցում: Իոննիսյանի նկատմամբ քաղաքացիական հասարակության զգալի աջակցությունից հետո հուլիսին տնօրենները հրաժարվեցին իրենց պահանջից:

Ինտերնետի ազատություն

Անհատները և խմբերը, ընդհանուր առմամբ, կարողացել են տեսակետներ արտահայտել ինտերնետի միջոցով, ինչպես նաև էլեկտրոնային փոստով: Որոշ իրավապաշտպան ակտիվիստներ ու ընդդիմադիր կուսակցությունների անդամներ այնուհանդերձ պնդում էին, որ իշխանությունները հսկել են իրենց էլեկտրոնային փոստն ու ինտերնետային

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

գրագրությունը (տես՝ Մաս 1.գ): Ապրիլի 2-ին, երբ խորհրդարանական ընտրություններին մասնակցելու նպատակով ընտրողները գնում էին ընտրատեղամասեր, անհայտ անձանց թիրախում հայտնվեցին երկրի որոշ անկախ լրատվական ձայների սոցիալական հարթակները: Ռուսալեզու պրոֆիլների կողմից մատնանշվելուց հետո արգելափակվեցին թվիթերյան 4 օգտատերերի հաշիվներ. փորձ արվեց նաև ընտրական հեշթեգն օգտագործելու միջոցով տարածել ընտրություններում օտարերկրյա ներգրավվածության մասին կեղծ նամակ: Բացի այդ, հայտնի դասախոս և մեկնաբան Բաբկեն Տեր-Գրիգորյանը հայտնել էր, որ իր ֆեյսբուքյան հաշիվը կոտրելու երկու փորձ է եղել. ըստ ֆեյսբուքի՝ կոտրման փորձերը ենթադրաբար իրականացվել են պետական հովանավորությամբ:

Ըստ Միջազգային հեռահաղորդակցության միության տվյալների 2016թ. Հայաստանում ինտերնետից օգտվում էր բնակչության 62 տոկոսը:

Ուսումնակրթական ազատություն ու մշակութային միջոցառումներ

Առաջատար պետական բուհերի ղեկավար կազմը և ուսանողական խորհուրդները քաղաքականացված են ու փոխկապակցված իշխանական ՀՀԿ-ի հետ (տես՝ Մաս 3) հետ: Օրինակ՝ հանրապետության նախագահ Մերժ Սարգսյանը Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահն է: Նախարարները նախագահել են այլ բուհերի հոգաբարձուների խորհուրդներում կամ ընդգրկված եղել դրանց կազմում: Ըստ իրավապաշտպան դիտորդների ուսանողական խորհուրդների նկատմամբ բուհերի մեծ մասում եղել են տարաբնույթ ճնշումներ, որպեսզի նրանք պաշտպանեն բուհի շահերը և ոչ թե ուսանողների շահերը և կարողանան ուսանողական կազմի ուշադրությունը բևեռել ոչ քաղաքական ու պակաս զգայուն հարցերին: Չնայած այս քաղաքական ներգործությանը՝ ակադեմիական շրջանակներում կարծում են, որ ազատ են քաղաքական հաստատությունների և գործընթացների մասին քննադատաբար արտահայտվելու հարցում:

Հուլիսի «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի կազմակերպիչները հանրության բացասական արձագանքին ի պատասխան չեղյալ հայտարարեցին ԼԳԲՏԻ անձանց վերաբերող 2 ֆիլմերի ցուցադրումը (տես՝ Մաս 6, Սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված բռնության դրսևորումներ, խտրականություն և այլ չարաշահումներ):

Սեպտեմբերի 11-ին լրատվամիջոցների հաղորդմամբ Մշակույթի նախարարությունը հրամայել էր ժամանակից շուտ դադարեցնել Թումանյանի տուն-թանգարանում բացված «Խավարում» ցուցադրությունը, որը նվիրված էր ստալինյան դարաշրջանի քաղաքական ռեպրեսիաների զոհերին: Փակելու մասին որոշումը զգալի վրդովմունք առաջացրեց հասարակության շրջանում, որին ի պատասխան Մշակույթի նախարարությունը և այլ

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

պաշտոնյաներ ասացին, որ այն չափից ավել «քաղաքական» էր և որ ցուցադրության համար Մշակույթի նախարարությունը «թույլտվություն» չէր տվել:

բ) Խաղաղ հավաքներ կազմակերպելու ու միավորումներ կազմելու ազատություն

Սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունքը: Որոշ դեպքերում կառավարությունը սահմանափակել է այս ազատությունները:

Հավաքների ազատություն

Սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է խաղաղ հավաքների ազատության իրավունքը: Թեպետ ապրիլի խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի շրջանում քաղաքական հավաքների գերակշիռ մասն անցել է առանց միջամտության, սակայն ընդդիմադիր կուսակցությունների որոշ համակիրների նկատմամբ եղել են ճնշումներ, որպեսզի չմասնակցեն ընդդիմության քարոզչական ցույցերին (տես՝ Մաս 3): Տարվա ընթացքում եղել են որոշ դեպքեր, երբ կառավարությունը միջամտել է քաղաքացիական ակտիվիստների կազմակերպած փոքրամասշտաբ հավաքներին:

Հուլիսի 30-ին Հյուսիսային Ռայթս Վոչը հայտարարություն տարածեց, որտեղ նշում էր, որ թեև կառավարությունն ամենայն իստությամբ քրեական հետապնդում է իրականացրել ցուցարարների հանդեպ, սակայն կառավարությունը լիարժեք պատասխանատվության չի ենթարկել 2016թ. հուլիսին Երևանում տեղի ունեցող մեծապես խաղաղ հակակառավարական ցույցերի ժամանակ տեղ գտած ոստիկանական բռնությունների մեղավորներին: Որոշ ցույցերի ժամանակ իրավասու մարմիններն օգտագործել են բռնի ուժ՝ վնասվածքներ հասցնելով բազմաթիվ ցուցարարների, ինչպես նաև դրանց լուսաբանող լրագրողների: Իրավասու մարմինները կամայականորեն բերման են ենթարկել ցույցերի առաջնորդներին ու հարյուրավոր մասնակիցների՝ ումանց դեմ ներկայացնելով քրեական մեղադրանքներ: Ըստ Հյուսիսային Ռայթս Վոչի իրավասու մարմինները պաշտոնապես մեղադրանք են առաջադրել 32 ցուցարարի նկատմամբ, որից 21-ը դատապարտվել են, ընդ որում 11-ին նշանակվել է պատիժ ազատազրկման տեսքով, սակայն այս բռնությունների հետ կապված քրեական հետապնդում չի իրականացվել որևէ պաշտոնյայի հանդեպ:

Փետրվարի 27-ից մինչև մարտի 6-ը քաղաքացիական ակտիվիստ Շահեն Հարությունյանը նստացույց էր անում Երևանի ազատության հրապարակում՝ պահանջելով ազատ արձակել նախնական կալանքի տակ գտնվող «Մասնա Շոեր» զինված խմբի համակիր Արթուր Սարգսյանին (տես՝ Մաս 3.դ): Ըստ Հելսինկյան կոմիտեի՝ ոստիկանությունը պահանջել էր մասնակիցներին դադարեցնել բողոքի ակցիան, քանի որ աղմուկն անհանգստացնում էր մոտակա շենքերի բնակիչներին այն պարագայում, երբ մասնակիցների թիվը երբեք չէր

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

գերազանցում 30-ը, իսկ մոտակայքում բնակելի շենքեր չկային: Հարությունյանը լրագրողներին հայտնել էր, որ ոստիկանները հալածել են մասնակիցներին և նրանց ընտանիքի անդամներին՝ այցելելով նրանց տներ կամ նրանց բերման ենթարկելով ոստիկանություն: Հարությունյանը պնդում էր, որ եղել է դեպք, երբ տեղի հիվանդանոցում աշխատող բուժքույր մորն աշխատանքից զրկելու սպառնալիքով մի մասնակցի պարտադրել են ստորագրել փաստաթուղթ, որով նա խոստանում էր այլևս չմասնակցել ակցիային:

Սեպտեմբերի 19-ին ոստիկանությունը բերման ենթարկեց 2016թ. ձերբակալված և «Մասնա Ծոեր» զինված խմբին աջակցելու մեղադրանքով դատարանի առաջ կանգնած Հայաստանի և ԱՄՆ-ի երկքաղաքացի Գարո Եղնուկյանի կնոջն ու երեք չափահաս երեխաներին: Ընտանիքն իր բողոքն էր հայտնում կապված «Հիմնադիր խորհրդարանի» անդամ և կառավարությանը քննադատող երկու հայտնի գործիչների՝ Եղնուկյանի ու Ժիրայր Սեֆիլյանի կալանքի փաստի վերաբերյալ: Ոստիկանությունը բերման ենթարկեց ընտանիքի 4 անդամներին, ինչպես նաև «Հայ կանանց ճակատ» շարժման երկու անդամների Երևանի Հանրապետության հրապարակից, երբ վերջիններս քաղաքական շարժառիթներով պայմանավորված ձերբակալությունների մասին թուուցիկներ էին բաժանում: Այդ օրերին Հանրապետության հրապարակում գտնվող հյուրանոցում էին հանգրվանել ԱՄՆ կոնգրեսականներ և հայկական սփյուռքից ժամանած հյուրեր, ովքեր եկել էին մասնակցելու կառավարության կազմակերպած Հայաստան-սփյուռք համաժողովին: Նրանք բերման ենթարկվեցին առանց դատարանի որոշման՝ իբր եղել էր անանուն հաղորդում, որ այդ ընտանիքը պայթուցիկ նյութեր ունի: Ըստ ընտանիքի անդամներից մեկի՝ ոստիկանները պայթուցիկներ գտնելու համար իրենց խուզարկել են ոստիկանությունում 2.5 ժամ գտնվելուց հետո, մինչդեռ նրանց տանն արդեն իրականացվել էր խուզարկություն: Իրավասու մարմինները Եղնուկյանի ընտանիքի անդամներին և «Հայ կանանց ճակատ» շարժման երկու անդամներին ավելի քան երեք ժամ պահելուց հետո ազատ արձակեցին, ինչը գերազանցում է առանց մեղադրանք ներկայացնելու պահման թույլատրելի ժամանակը:

Հելսինկյան կոմիտեն իր զեկույցում, որտեղ ամփոփում է 2016թ. հուլիսից մինչև 2017թ. հունիս տեղի ունեցած 109 հավաքների վերաբերյալ դիտարկումները, նշում էր, որ այդ հավաքներին անհամաչափորեն մեծ էր ոստիկանական ներկայությունը և որ ոստիկանությունը կիրառում էր բացարձակ արգելքներ որոշակի վայրերում, օրինակ՝ նախագահական պալատի, գլխավոր դատախազության, դատապարտյալների հիվանդանոցի և Ռուսաստանի դեսպանության դիմաց ցույցեր անցկացնելու վերաբերյալ կամ ցուցարարներին ուժով հեռացնում էր այդ վայրերից:

Ըստ պաշտոնական աղբյուրների՝ դեկտեմբերի կեսերի դրությամբ ՀՔԾ-ի կողմից որևէ մեկին մեղադրանք չի առաջադրվել և չեն բացահայտվել կասկածյալներ 2016թ. հուլիսյան բողոքի ակցիաների ժամանակ իրավապահների կողմից պաշտոնական լիազորությունները չարաշահելու հաղորդումների հետ կապված:

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Միավորումների ազատություն

Այս իրավունքն ամրագրված է սահմանադրությամբ և օրենքներով և կառավարությունը, ընդհանուր առմամբ հարգել է այն: Հասարակական կազմակերպությունների մասին նոր օրենքով, որը գործողության մեջ է մտել փետրվարի 4-ից, ՀԿ-ներն իրավասու են դատարանում իրենց շահառուների օրինական շահը ներկայացնել, որը սակայն առնչվում է միայն շրջակա միջավայրի պահպանության խնդիրներին, ինչպես նաև պարունակում է մի շարք այլ նախապայմաններ: Այս սահմանափակումները հակասում են Սահմանադրական դատարանի 2010թ. որոշմանը, որը բոլոր ՀԿ-ներին իրավունք էր վերապահում օրինական շահերը ներկայացնել կանոնադրական նպատակներով ամրագրված բոլոր ոլորտներում:

զ) Կրոնի ազատություն

Տես՝ Պետքարտուղարության Կրոնական ազատությունների մասին միջազգային զեկույցը www.state.gov/religiousfreedomreport/ էջում:

դ) Տեղաշարժվելու ազատություն

Օրենքը սահմանում է ներքին տեղաշարժի, արտասահմանյան ուղևորությունների, արտագաղթի և հայրենադարձության ազատությունը, և կառավարությունը հիմնականում հարգել է այս իրավունքները:

Ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ), փախստականներին, վերադարձող փախստականներին ու ապաստան հայցողներին, քաղաքացիություն չունեցող անձանց ու այլոց պաշտպանելու ու աջակցելու նպատակով իրավասու մարմինները համագործակցել են ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի (ՄՆԿԻ) գրասենյակի և մարդասիրական այլ կազմակերպությունների հետ:

Չարաշահումներ կապված միգրանտների, փախստականների ու քաղաքացիություն չունեցող անձանց հետ. Թեպետ միգրանտների կամ փախստականների հանդեպ համակարգային խտրականության մասին հաղորդումներ չեն եղել, սակայն աֆրիկյան ծագմամբ կամ Հայաստանյայց առաքելական եկեղեցու հավատքին չդավանող ապաստան հայցողներն ապաստան հայցելու մասին դիմումները հանձնելիս բխվել են խտրականության և հաճախ կալանավորվել են, ինչը չի կիրառվել հայկական ծագում ունեցող դիմողների պարագայում:

Տարվա ընթացքում եղել են անօրինական մուտքի համար ապաստան հայցողներին կալանավորելու կրկնվող դեպքեր, հատկապես՝ Թուրքիայի հետ խստորեն հսկվող ու փշալարով պատված սահմանը հատողների պարագայում: Իրավասու մարմինները շարունակել են ապաստան հայցելու մասին դիմումներն ընդունելուց հետո ապօրինի սահմանը հատելու համար կալանավորել ու դատապարտել ապաստան հայցողներին:

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Չնայած օրենքի համաձայն ապաստան հայցողներին չի նախատեսվում քրեական պատասխանատվություն ապօրինի սահմանահատման համար, իրավասու մարմինները պահանջել են, որ նրանք մնան կալանքի տակ մինչև իրենց դիմումի բավարարումը կամ կրեն պատժի մնացյալ մասը: Օրինակ՝ 2016թ. նոյեմբերին աֆղանստանցի երկու ապաստան հայցողներ, ովքեր կալանքի տակ էին վերցվել 2015թ. սահմանն անօրինականորեն հատելու համար, դատապարտվեցին 3 տարվա ազատազրկման: Կալանքն ու դատապարտումը տեղի ունեցան, չնայած սահմանին ձերբակալվելուն պես նրանք գրեթե անմիջապես ապաստանի դիմում էին ներկայացրել ու չնայած որ ապաստան տրամադրելու մասին նրանց դիմումի վերաբերյալ հուլիսի դրությամբ դեռևս որոշում կայացված չէր: Ըստ UNHCR-ի՝ երկարատև կալանքի արդյունքում այս երկու անձանց մոտ էլ ի հայտ են եկել խիստ արտահայտված ֆիզիկական ու հոգեբանական առողջական խնդիրներ:

Արտասահմանյան ուղևորություններ. Ժամանակավոր կամ մշտապես երկրից հեռանալու համար քաղաքացիները պետք է ելքի վիզա ձեռք բերեն: Ժամանակավոր երկրից բացակայելու համար անհրաժեշտ ելքի վիզա կարելի է մեկ օրվա ընթացքում հեշտությամբ ձեռք բերել՝ վճարելով 1000 դրամ (2 ԱՄՆ դոլար) վավերականության յուրաքանչյուր տարվա համար:

Ներքին տեղահանված անձինք

2015թ. մայիսի դրությամբ ըստ Ներքին տեղահանության մոնիտորինգի կենտրոնի 1988-94 թթ. շուրջ 65.000 տարհանված տնային տնտեսություններից դեռևս մոտ 8.400 ՆՏԱ դեռևս եղել է տեղահան վիճակում: Երկրի որոշ ՆՏԱ-ների ու նախկին փախստականների համար ապահովված չէին համարժեք բնակարանային պայմաններ ու սահմանափակ էին տնտեսական հնարավորությունները:

Փախստականների պաշտպանություն

Ապաստանի հասանելիություն. Օրենքի համաձայն նախատեսվում է անձանց փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակի տրամադրում, և կառավարությունը ստեղծել է փախստականներին պաշտպանություն տրամադրելու համակարգ: Օրենքը հաշվի է առնում երեխաների, մտավոր հաշմանդամություն ունեցողների և տրավմա վերապրածների առանձնահատուկ կարիքները և կալանավայրերին թույլ է տալիս ընդունել ապաստանի դիմումներ: Ծագումով ոչ-հայ փախստականները քաղաքացիություն կարող էին ստանալ երկրում երեք տարվա մշտական օրինական կացությունից հետո:

Ըստ UNHCR-ի՝ փախստականի կարգավիճակի սահմանման հետ կապված ընթացակարգերի ու որոշումների կայացման գործընթացի ընդհանուր որակը վերջին տասնամյակի ընթացքում բարելավվել է, սակայն մտահոգություններ են մնում որոշակի կրոնական նկարագիր ունեցող անձանց ապաստան հայցելու գործերի որոշումների առնչությամբ: UNHCR-ը շարունակաբար

նկատում էր, որ ապաստանի հետ կապված ընթացակարգերն ու փախստականներին վերաբերող քաղաքականության իրականացման հետ կապված բոլոր հարցերը ողողված են անվտանգության նկատառումներով: UNHCR-ը մտահոգությամբ նշում էր ԱԱԾ-ի մեծացող ազդեցությունն ապաստանի տրամադրման մասին Միգրացիայի պետական ծառայության կողմից որոշումների կայացման վրա և անօրինական ճանապարհով երկիր մուտք գործած ոչ քրիստոնյա ապաստան հայցողների նկատմամբ կիրառվող կալանքի երկար ժամկետը: Այնուհանդերձ, տարվա ընթացքում Միգրացիայի պետական ծառայությունն առաջին անգամ ընդունեց ԼԳՏԻ/գենդերային հիմքով փախստականների հայցեր՝ մերժելով ԱԱԾ-ի մերժելու առաջարկները:

Ապաստանի հետ կապված ընթացակարգերի թերություններից էին թարգմանիչների համար պետական ֆինանսավորման բացակայությունը և համապատասխանելիությունը դիտարկող պաշտոնյաների սահմանափակ իրավասության շրջանակը: Բացի այդ, դատական պրակտիկան չի ներառում ապաստանի դիմումների իրեդեն/նյութական տարբերի խորը վերլուծություն, Միգրացիայի պետական ծառայության փաստարկների բովանդակային դիտարկում կամ որևէ ակնհայտ հղում միջազգային ստանդարտներին: Չնայած վերջին զարգացումներին, երբ դատավորները պահանջեցին, որպեսզի ԱԱԾ-ը հիմնավորում ներկայացնի վերջին երկու գործերով իր առաջարկների հետ կապված, դատարանները վճռեցին, որ ԱԱԾ-ի նույնիսկ չփաստարկված դիրքորոշումը կառող է հիմք դառնալ ապաստանի տրամադրումը մերժելու համար:

Իրավասու մարմինները երկրում գտնվող ազգությամբ հայ սիրիացիներին շարունակել են տրամադրել պաշտպանության զանազան տարբերակներ, մասնավորապես՝ արագացված ընթացակարգով քաղաքացիություն, կացության թույլտվություն կամ փախստականի կարգավիճակ: Արագացված կարգով քաղաքացիության տրամադրմամբ Սիրիայից տեղահանված անձինք ձեռք բերեցին առողջապահական ու հիմնական սոցիալական ծառայությունների մասով նույն իրավունքները, ինչ երկրի քաղաքացիները:

2016 թ. ապրիլին շփման գծում և հայ-ադրբեջանական միջազգային սահմանին լարվածության ավելացման հետ կապված շփման գծին հարող բնակավայրերից եղել են քաղաքացիական անձանց տեղահանումներ: Տեղահանվածների մի մասը մնացել են Լեռնային Ղարաբաղում, իսկ մյուսները մուտք են գործել Հայաստան՝ այստեղ ապաստան գտնելու համար: Ըստ UNHCR-ի՝ տեղահանվածների ճնշող մեծամասնությունը կազմել են կանայք, երեխաները, տարեցները՝ հիմնականում շփման գծին մոտ գտնվող գյուղական համայնքներից: UNHCR-ի հաշվարկներով տեղահանվածների ընդհանուր թիվը տեղահանությունների ամենատար պահին կազմում էր 2.300 հոգի և նրանցից 570-ը հունվարի դրությամբ գտնվում էին երկրում:

Հիմնական ծառայությունների հասանելիություն. Ապաստան հայցողների ընդունման միակ կենտրոնում պայմանները չէին համապատասխանում ստանդարտներին և հարմարեցված չէին հաշմանդամություն ունեցող անձանց համար: Փախստականներին տրամադրված

կացարանները սովորաբար եղել են ոչ բավարար քանակի և ունեցել են վատ պայմաններ, և այդ հարցը, ինչպես նաև զբաղվածությունը, շարունակում էին մնալ որպես ամենամեծ մտահոգություն: Տեղահանված շատ ընտանիքներ օգտվում էին վարձավճարի սուբսիդավորման ծրագրից, որին աջակցում էին UNHCR-ը և սփյուռքի կազմակերպությունները: 2015թ. իրավասու մարմինները բացեցին փախստականների ինտեգրման տուն նախատեսված 29 հոգու համար և փախստականի կարգավիճակի շնորհումից հետո առաջին մի քանի ամիսների համար այստեղ առաջարկում էին անվճար օթևան: Սիրիահայերը խոսում են մեկ այլ բարբառով և լեզվական տարբերությունները ստեղծում էին խոչընդոտներ աշխատանքի հարցում, և սկզբնական շրջանում՝ կրթության հարցում:

Հիմնարար լուծումներ, 2016թ. հուլիսին կառավարությունն ընդունեց մի նոր հայեցակարգային փաստաթուղթ, որտեղ նկարագրվում էին ապաստան ու փախստականի կարգավիճակ ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման ուղղությամբ սահմանվող նպատակները: Ըստ UNHCR-ի փախստականների պաշտպանության իրավական դաշտի ընդլայնումը սկզբունքորեն ողջունելի էր, սակայն հայեցակարգը չէր անդրադառնում Հայաստանի քաղաքացիություն ստացած սիրիացիներին, այդ կերպ ծառայությունների մատուցման դաշտից դուրս թողնելով տեղահանված սիրիացիների մեծ մասին, ովքեր հակամարտության սկզբից ի վեր ժամանել էին Հայաստան: Հայեցակարգը նաև չէր անդրադառնում ինտեգրման այնպիսի կարևոր բաղադրիչների, ինչպիսիք են լեզվական կարիքները և կրթության հասանելիությունը:

Թեպետ կառավարությունն ընդունել էր տեղում ինտեգրման մասին նախնական հայեցակարգ, սակայն դրա լիարժեք իրականացումը պետական ֆինանսավորման բացակայության պատճառով դեռ չէր մեկնարկել: ՀԿ-ները մասամբ լրացնում էին այս բացը՝ UNHCR-ի և միջազգային դոնորների ֆինանսավորմամբ:

Նոր սահմանադրությամբ ու ընտրական օրենսգրքով փախստականներին և երկրում բնակվող որոշ այլ անձանց իրավունք էր տրվում մասնակցել տեղական ընտրություններին, եթե նրանք ընտրություններից առաջ առնվազն մեկ տարի բնակվել են տվյալ համայնքում: UNHCR-ն իր ՀԿ գործընկերների հետ ձեռնամուխ էր եղել այս մասին փախստականներին իրազեկելու գործին և խրախուսում էր տեղահանված անձանց իրացնել իրենց քաղաքական իրավունքները, մասնավորապես՝ Երևանի ավագանու ընտրություններում, որը տեղի ունեցավ մայիսին:

Քաղաքացիություն չունեցող անձինք

Ըստ ոստիկանության անձնագրերի ու վիզաների վարչության տվյալների քաղաքացիություն չունեցող անձանց թիվն աճել է, 2015թ. 185 հոգուց դառնալով 490 հոգի հուլիսին: Այս աճը պայմանավորված է այլ երկրի, մասնավորապես՝ Ռուսաստանյան Դաշնության

քաղաքացիությունն ձեռք բերելու նպատակով քաղաքացիությունից հրաժարվող անձանց թվի ավելացմամբ: Բացի այդ, իրավասու մարմինները հուլիսի դրությամբ որպես քաղաքացիություն չունեցող անձ էին որակում նաև Ադրբեջանից եկած շուրջ 1.300 փախստականների:

Ըստ օրենքի երկրի տարածքում ծնված քաղաքացիություն չունեցող երեխաներին տրվում է Հայաստանի քաղաքացիություն:

ՄԱՍ 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Չնայած սահմանադրությամբ և օրենքներով քաղաքացիներին տրված է գաղտնի քվեարկության միջոցով իրացվող համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա ազատ ու արդարացի պարբերական ընտրությունների միջոցով իշխանությունը փոխելու հնարավորություն, սակայն իշխանությունները շարունակել են միջամտել ընտրական և այլ քաղաքական գործընթացին այնպիսի գործելակերպերով, որոնք միտված էին ապահովելու իշխող ՀՀԿ-ի գերիշխող դիրքը:

Ապրիլի 2-ին երկրում անցկացվեցին Ազգային ժողովի ընտրություններ, որով նոր սահմանադրության ներքո ընտրվեց առաջին օրենսդիրը: Սրանով և ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններով երկրի կիսանախագահական կառավարման համակարգը փոխվեց կառավարման խորհրդարանական համակարգով՝ վերացնելով երկրի նախագահի ու երկու խոշոր քաղաքների քաղաքապետերի ուղղակի ընտրությունը և ներդնելով բարդ համամասնական ընտրակարգ, որը շատերը բնութագրում էին որպես կիսամեծամասնական ընտրակարգ:

Ընտրություններ և քաղաքական մասնակցություն

Կայացած վերջին ընտրությունները. Չնայած ընտրությունների կազմակերպման հարցում առկա դրական տեղաշարժերին, ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների հետ կապված եղան հաղորդումներ ընտրակաշառքի լայնամասշտաբ օգտագործման, ընտրողների ահաբեկման և վարչական ռեսուրսի չարաշահման վերաբերյալ: Ըստ հաղորդումների քվեների գնումը հիմնականում կազմակերպվում էր ՀՀԿ-ի ընտրատարածքային թեկնածուների կողմից, ինչպես նաև Ծառուկյան դաշինքի կողմից:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն ընտրությունները բնութագրեց այսպես. «լավ էին կազմակերպված և հիմնարար ազատություններն ընդհանուր առմամբ պահպանվել էին: Չնայած այն հանգամանքին, որ իրավական դաշտում իրականացվել են ողջունելի բարեփոխումներ և նոր

տեխնոլոգիաներ են ներդրվել նվազեցնելու ընտրական խախտումների դեպքերը, ընտրությունները ստվերվեցին ընտրակաշառքների և հանրային ծառայողների ու մասնավոր ընկերությունների աշխատողների վրա ճնշումների մասին արժանահավատ տեղեկություններով: Դա նպաստեց հանրության կողմից ընտրությունների նկատմամբ ընդհանուր վստահության ու հավատի բացակայությանը»:

Իրավասու մարմինները հիմնականում ընտրակաշառքի ու վարչական ռեսուրսի մասին հաղորդումներին ընթացք չէին տալիս: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդները մատնանշում էին, որ «հասարակության մեջ շարունակվում է խուսափողականությունն ընտրական խախտումների ու կեղծիքների մասին հաղորդում տալու հարցում, ինչը պայմանավորված է բողոքների քննման արդյունավետության նկատմամբ անվստահությամբ: Դատական համակարգի, ընտրական վարչարարության և իրավապահ մարմինների անկախության պակասը և նրանց կողմից բողոքները քննելու եղանակը խաթարում են իրավական պաշտպանության արդյունավետությունը»:

Վարչական ռեսուրսի չարաշահումները բացահայտելու նպատակով Իրազեկ քաղաքացիների միավորումը հրապարակեց ընտրարշավի ընթացքում իրականացված ձայնագրություններ, որտեղ դպրոցների ու մանկապարտեզների 114 տնօրեններ խոսում էին, թե ինչպես էին ցուցակագրել ծնողներին ու ուսուցիչներին, ովքեր խոստացել էին կողմ քվեարկել իշխող ՀՀԿ-ին: Ձայնագրության մեջ տնօրենները նշում էին, որ ցուցակները ներկայացնելու են ՀՀԿ թեկնածուների ընտրական շտաբներին և տեղական կամ մարզային իշխանություններին: Այս բացահայտումների հետ կապված մրցակից երկու կուսակցություն առանձին-առանձին դիմում ներկայացրեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողովին (ԿԸՀ)՝ պահանջելով, որ վերջինս դիմի վարչական դատարան վարչական ռեսուրսը չարաշահելու հիմքով ՀՀԿ-ին ընտրարշավից հեռացնելու համար: Քննչական մարմիններն Իրազեկ քաղաքացիների միավորման կողմից առաջ քաշված վարչական ռեսուրսի չարաշահման պնդումների հետ կապված չապահովեցին վստահելի քննություն:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդները մատնանշում էին, որ «ԿԸՀ-ն ժամանակ առ ժամանակ ուսումնասիրել է որոշ պնդումների փաստացի հանգամանքները, սակայն մանրազնի չի քննել վեճի առարկան, այդ թվում՝ ուսուցիչների վրա՝ ստորագրություններ հավաքելու նպատակով ճնշումներ կամ ահաբեկումներ կիրառելու հնարավորությունը»: ՀՀԿ-ն ընդունեց, որ ցուցակներ կազմվել են, սակայն պնդում էին, որ դա օրինական քարոզչություն է եղել, քանի որ տեղի է ունեցել աշխատանքային ժամերից դուրս: Արձագանքելով ՀՀԿ-ի հայտարարություններին՝ ԿԸՀ փաստեց, որ աջակիցների ցուցակի ներկայացումը տեղական իշխանություններին չի հակասում օրենքին, քանի որ իշխանությունները կարող են մասնակից լինել ընտրարշավին: Օրենքն հստակորեն արգելում է պետական պաշտոնյաների կողմից ընտրական քարոզչության իրականացումն իրենց պաշտոնական պարտականությունների

կատարման ժամանակ, սակայն ԿԸՀ-ն ընդունեց, որ չի ուսումնասիրել, թե այդ գործողությունները երբ են տեղի ունեցել:

Ապրիլի 13-ին հրապարակվեց մի ձայնագրություն, որտեղ Երևանի ՍԱՍ սուպերմարկետների ցանցի ղեկավարությունը հանդիմանում ու սպառնում էր աշխատողներին, ովքեր դեռ չէին պարտավորվել զգալի թվով ձայներ ապահովել ընկերության հիմնադիր և ՀՀԿ-ական թեկնածու Արտակ Սարգսյանի համար: Ըստ լրատվամիջոցների պնդումների ձայնագրության մեջ ելույթ ունեցողն արտակ Սարգսյանի եղբայր Արամ Սարգսյանն էր, ով ՍԱՍ Գրուփի համահիմնադիրն է: Ապրիլի 21-ին ՀԲԾ-ը հայտարարեց, որ ձայնագրության հետ կապված քրեական գործ է հարուցվել. սեպտեմբերի 8-ին գործը կարճվեց, որևէ մեղադրանք չներկայացվեց:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդների զեկույցում մատնանշված մյուս խնդիրներից էին թեկնածուների, կուսակցությունների և ընտրողների միջև բանավեճերի բացակայությունը, ինչի հետևանքով ընտրողները հնարավորություն չունեցան լիովին իրազեկ ընտրություն կատարել: Չեկույցը նաև որպես խնդիր առանձնացրել է «լրագրողների կողմից ինքնագրաքննության կիրառումը և կառավարության գործունեության քննադատական լուսաբանումից խուսափելը, այդ թվում՝ Հանրային հեռուստաընկերությամբ»:

Քաղաքական կուսակցություններ և քաղաքական մասնակցություն. Թեպետ օրենքը չափից դուրս չի սահմանափակում կուսակցությունների գրանցումը կամ գործունեությունը, սակայն իշխանությունները քաղաքական բազմակարծությունը ճնշել են այլ ուղիներով:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրական դիտորդական առաքելությունը (ԸԴԱ) ապրիլի 2-ի ընտրությունների մասին վերջնական զեկույցում հիշատակում էր մի քանի դրվագներ, երբ ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներն ԸԴԱ-ին տեղյակ էին պահել, որ իրենց կողմնակիցներին նկատմամբ, հաճախ՝ համայնքների ղեկավարների կողմից, եղել են ճնշումներ, որ չմասնակցեն հավաքներին: Բացի այդ, մարզերից մեկում ուսուցիչների, բժիշկների և այլ պետական աշխատողների ղեկավարները հրահանգել են նրանց մասնակցել ՀՀԿ թեկնածուի հետ հանդիպմանը:

Շարունակվել են դժգոհությունները, որ ընդդիմադիր կուսակցություններին ուղղվող ֆինանսական հատկացումները կանխելու նպատակով իշխանություններն օգտագործել են իրենց վարչական և իրավական ռեսուրսները, այդ թվում նաև ընտրովի հարկային ստուգումները: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հայտնում են գործող պաշտոնյաների կողմից ընտրարշավների ընթացքում կառավարական ռեսուրսների չարաշահման մասին, այդ թվում՝ սպառնալիքներ ՀՀԿ-ի օգտին չքվեարկելու դեպքում ընտանիքին սոցիալական նպաստից կամ ուսանողներին ուսման վարձի արտոնություններից զրկելու վերաբերյալ կամ առաջարկելով քվեի դիմաց փոխհատուցում կոմունալ

ծառայությունների դիմաց վճարումների տեսքով կամ այլ ծառայություններ ի լրումն կանխիկ տրվող կաշառքի:

Իշխանական կուսակցության հետ կապերն ըստ հաղորդումների թույլ են տվել պահպանել աշխատանքն ու աշխատանքային առաջխաղացում ունենալ թե՛ պետական, թե՛ մասնավոր հաստվածներում: Տեղական դիտորդների կողմից եղել են բազմաթիվ հաղորդումներ այն մասին, որ որոշ թեկնածուներ, որոնք առաջադրվել են որպես անկախ թեկնածուներ, ընտրվելուց հետո անդամագրվել են ՀՀԿ-ին կամ դարձել են կուսակցությանը հավատարիմ անձնավորություն: Քանի որ համայնքները մասամբ կախման մեջ են գտնվում պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից, այդ հաղորդումներում ակնարկվում էր, որ պետական բյուջեից համայնքապետի ստացած աջակցության մակարդակը պայմանավորված էր նրանց կողմից տրված քվեներից: Նույն կերպ, պետական դպրոցներում, բուհերում, բուժհաստատություններում ու այլ պետական ֆինանսավորմամբ գործող հիմնարկություններում ղեկավար պաշտոններ զբաղեցնելու կամ ռեսուրսներ ստանալու համար պետք է լինել կա՛մ Հանրապետական կուսակցության անդամ, կա՛մ կուսակցությանը հավատարիմ անձնավորություն: Իշխանական կուսակցությունն ու վերջինիս թեկնածուները ենթադրաբար չարաշահել են վարչական ռեսուրսը պետական և որոշ մասնավոր ձեռնարկություններում աշխատողներին ահաբեկելու ու նրանց օժանդակությունը ստանալու համար:

Եղել են դժգոհություններ, որ կապեր ունեցող գործարարներն իրենց շահույթից որոշակի մաս ուղղել են իշխանական կուսակցությանը կամ իշխանական քաղաքական վերնախավի հետ կապ ունեցող այլ կուսակցություններին՝ հարկեր չվճարելու կամ հարկման մեղմ դաշտում հայտնվելու տեսքով տնտեսական առավելություններ ստանալու դիմաց: Եղել են նաև պնդումներ, որ աշխատանքի ընդունման որոշումներում իշխանությունները խտրական վերաբերմունք են հանդես բերել ընդդիմադիր կուսակցությունների անդամների հանդեպ:

ՀԿ-ների կողմից ապրիլյան ընտրությունները դիտարկելու հարցում եղել են որոշ սահմանափակումներ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի վերջնական զեկույցի համաձայն ԿՀՀ-ը մերժել է հավատարմագրել երկու տեղական կազմակերպության և հրաժարվել է դիտորդություն իրականացնելու հրավեր ուղարկել բոլոր հետաքրքրված միջազգային ՀԿ-ներին:

Կանանց և փոքրամասնությունների մասնակցությունը. Որևէ օրենք չի սահմանափակում կանանց կամ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքական գործընթացներին, սակայն հասարակության նահապետական բնույթը խոչընդոտել է կանանց լայնամասշտաբ մասնակցությանը երկրի քաղաքական կյանքում, ինչպես նաև հանրային հաստվածի որոշումներ կայացնող պաշտոններում: Թեպետ Ազգային ժողովում և Երևանի ավագանում կին պատգամավորների թիվը 2016թ. համեմատ ավելացել է, սակայն ցածր է մնում կանանց մասնակցության ցուցանիշն այս և այլ որոշում կայացնող օղակներում: Տարեվերջի դրությամբ 105 պատգամավոր ունեցող Ազգային ժողովում կար 20 կին

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

պատգամավոր, կառավարությունում՝ 18 նախարարներից կին էր 1-ը: Երկրի 10 մարզերից ոչ մեկի մարզպետը կին չէր: Երևանի ավագանու 65 ընտրված անդամներից միայն 18-ն էին կանայք: Խորհրդարանում երկրի 4 ամենախոշոր էթնիկ փոքրամասնությունների՝ եզդիական, քրդական, ասորական և ռուսական համայնքների համար օրենքով նախատեսված են տեղեր: Տարվա ընթացքում ընտրողների այս խմբերին ներկայացնելու համար ապրիլին կայացած ընտրություններում ընտրվել են խորհրդարանի 4 նոր անդամներ:

ՄԱՍ 4. ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Օրենքով պաշտոնական կոռուպցիայի համար սահմանված են քրեական պատժամիջոցներ: Կառավարությունն օրենքն արդյունավետ չի կիրառել, և պաշտոնյաներն անպատժելիորեն ներգրավված են եղել կոռուպցիոն գործողությունների մեջ: Տարվա ընթացքում եղել են բազմաթիվ պնդումներ պետական կոռուպցիայի վերաբերյալ:

Թեև սահմանադրությամբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց արգելվում է պետական պաշտոն զբաղեցնել, սակայն գործադիր պաշտոնյաները և օլիգարխները շարունակել են տեղեր զբաղեցնել նորընտիր Ազգային ժողովում, իսկ պետական տարբեր պաշտոնյաներ օգտագործել են պաշտոններն ի նպաստ իրենց սեփական գործարար շահերի: Շատ դիտորդների գնահատմամբ կառավարության հետ կապված կամ պետական պաշտոններ զբաղեցնող օլիգարխները տնտեսությունը մենաշնորհային են դարձրել: Ավելին, իշխանություններն ըստ հաղորդումների շարունակել են անտեսել լրատվական ու այլ հաղորդումները, որոնք առնչվում էին պետական պաշտոնյաների կոռուպացված գործունեությանը:

Կոռուպցիա. Եղել են բազմաթիվ լրատվական հաղորդումներ պետականորեն համակարգված կոռուպցիայի վերաբերյալ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ շինարարություն, հանրային կառավարում, դատական համակարգ, գնման ընթացակարգեր և պետության կողմից շնորհվող դրամաշնորհներ (այդ թվում՝ նախագահականի կողմից տրվող), առողջապահություն, հարկեր, իրավապահ, կրթական և զինվորական ոլորտներ: Եղել են պնդումներ պետական միջոցների յուրացման մասին, կասկածելի բիզնես գործարքներում պետական պաշտոնյաների ներգրավման, կառավարության հետ կապեր ունեցող ընկերություններին հարկային և մաքսային արտոնություններ տալու մասին:

Հունվարի 24-ին Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (ԴԱՀԿ) նախկին պետ Միհրան Պողոսյանի գրասենյակը հայտարարեց, որ ՀՔԾ-ը հանցանքի կատարման ապացույցների բացակայության հիմքով կարճել է անօրինական ձեռնարկատիրության մեղադրանքով Միհրան Պողոսյանի դեմ հարուցված գործի քննությունը: ՀՔԾ-ը քննությունը

Մարդու իրավունքների գեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

հիմնված էր Միհրան Պողոսյանի օֆշորային ակտիվների վերաբերյալ «Հետք» հետաքննող լրագրողների առցանց թերթում 2016թ. ապրիլին հրապարակված հոդվածի վրա: Ըստ «Հետքի» հրապարակման Պողոսյանն օգտագործել էր իր պաշտոնական դիրքը, ինչպես նաև ԴԱՀԿ-ի ռեսուրսներն իր տարաբնույթ բիզնես շահերն առաջ տանելու համար: Չնայած հասարակության մեծ վրդովմունքին՝ Պողոսյանը որպես ՀՀԿ անդամ առաջադրվեց Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու: Նա հաղթեց և ձեռք բերեց պատգամավորական անձեռնմխելիություն:

Օգոստոսի 30-ին «Հետք» առցանց թերթը հրապարակեց մի հոդված, որտեղ դիտարկվում էին երկրում ամենամեծ արժեք ունեցող գույք հանդիսացող 10-ը ռեստորանների գույքահարկի մասով վճարումները: Ըստ հոդվածի խոշորագույն 10-ը ռեստորաններն առնչություն ունեին նախկին կամ ներկայիս պաշտոնյաների, այդ թվում Ազգային ժողովի ներկայիս ու նախկին պատգամավորների և վարչապետի հետ: Ամենաբարձր գույքային արժեք ունեցող ռեստորանը պատկանում էր Ազգային ժողովի պատգամավոր Գագիկ Ծառուկյանին, ով հրաժարվել էր ներկայացնել տվյալներ վճարված գույքահարկի գումարի վերաբերյալ, չնայած որ գույքահարկը կազմում է համայնքային բյուջեի մաս, որի տվյալները հասարակության համար բաց են: Արժեքով 2-րդ ամենամեծ ռեստորանի սեփականատերն ազգային ժողովի մեկ այլ պատգամավորի՝ Սամվել Ալեքսանյանի կինն էր, իսկ վճարված գույքահարկը կազմում էր պաշտոնական հաշվարկներով նախատեսվող գույքահարկի մեկ քառորդը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռեստորանի բացումից ի վեր այն վճարել է նախատեսվածից 16 միլիոն ՀՀ դրամով (32.000 ԱՄՆ դոլարով) պակաս գույքահարկ, հոդվածը եզրակացնում էր, որ այդ մասին սեփականատիրոջ և տեղական ինքնակառավարման մարմինների միջև ենթադրաբար ձեռք է բերվել հանցավոր համաձայնություն:

Եկամուտների ու գույքի հայտարարագրում. Օրենքով պահանջվում է, որ բոլոր բարձրաստիճան պետական պաշտոնյաները և նրանց ընտանիքի անդամները տարեկան կտրվածքով ներկայացնեն գույքի և եկամուտների հայտարարագրեր. սրանք ինտերնետում մասնակիորեն հասանելի են եղել հանրությանը: Հայտարարագրեր չներկայացնելու կամ դրանցում կեղծ տեղեկություններ ներկայացնելու համար սահմանված չեն եղել վարչական տույժեր, իսկ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, որը պատասխանատու է հայտարարագրերի ընդունման ու դիտարկման համար, իրավասություն չունի ստուգել դրանց հավաստիությունը կամ հայտարարագրված եկամուտների ծագումը կամ պաշտոնյաների նկատմամբ կիրառել պատժամիջոցներ կեղծ տվյալներ ներկայացնելու համար: Բազմաթիվ պաշտոնյաներ՝ դատավորներ, Ազգային ժողովի պատգամավորներ և նրանց կանայք/ամուսինները հայտարարագրել են եկամուտների ու ակտիվների անբացատրելի մեծ գումարներ, այդ թվում՝ մեծ անձնական նվիրատվություններ և փոխառություններից ստացվող միջոցներ: Իրավասու մարմինները քննություններ չեն անցկացրել այս հայտարարագրերի անհամապատասխանությունների կամ անբացատրելի

հարստության հանգամանքներով: Այս բացերը շտկելու նպատակով Ազգային ժողովն ընդունեց օրենքում փոփոխություններ, որոնք գործողության մեջ մտան հուլիսի 1-ից: Փոփոխություններով ընդլայնվեցին Էթիկայի հանձնաժողովի լիազորությունները՝ հայտարարագրերի ճշգրտությունն ու հայտարարագրված եկամտի աղբյուրները ստուգելու և սխալ կամ ոչ ամբողջական հայտարարագրման համար պաշտոնյաների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու մասով: Նախատեսվում էր, որ այս փոփոխությունները կգործեն 2018թ. փետրվարի 15-ից, որը եկամուտների մասին հաջորդ հայտարարագրի ներկայացման վերջնաժամկետն էր: 2016թ. դեկտեմբերին կատարված օրենսդրական փոփոխությամբ քրեականացվել է անօրինական հարստացումը:

ՄԱՍ 5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարդու իրավունքների ոլորտի տեղական և միջազգային խմբերն ընդհանուր առմամբ գործել են առանց կառավարության սահմանափակումների՝ քննելով և հրապարակելով մարդու իրավունքների դեպքերի վերաբերյալ իրենց եզրակացությունները: Չնայած պետական պաշտոնյաները երբեմն արձագանքել են նրանց կարծիքներին և համագործակցել, ժամանակ առ ժամանակ եղել են նաև ակտիվիստների հետապնդումներ:

Օգոստոսին Հյուսիսային Ռայթս Հաուս Երևան իրավապաշտպան ՀԿ-ների միավորման զեկույցում անդրադարձ էր կատարվել. «Մասնա Ծոեր» զինված խմբի անդամների պաշտպանությամբ զբաղվող փաստաբանների հանդեպ ճնշումներին ու անհավասար վերաբերմունքին (տես՝ Մաս 1.ե). «Վելես» ՀԿ-ի իրավապաշտպան Մարինա Պողոսյանի դեմ շարունակվող քրեական հետապնդմանը և սպառնալիքներին. պետական մարմինների և Երևանի քաղաքապետարանի կողմից ԼԳԲՏԻ հարցերով զբաղվող ՀԿ-ների գործունեության մասով ստեղծվող խոչընդոտներին (տես՝ Մաս 6). սոցիալական հարթակներում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի ներկայացուցիչ Արթուր Սաքունցի և այլոց հասցեին հնչեցվող մահվան սպառնալիքներին. հատկապես կանանց և ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության դիրքերից հանդես եկող իրավապաշտպանների վարկաբեկմանը և հալածանքներին ուղղված առցանց արշավին. Սյունիքի մարզպետի հետ առնչություն ունեցող անձանց կողմից բնապահպանների հանդեպ հալածանքներին. Իրազեկ քաղաքացիների միավորման կողմից իշխող ՀՀԿ-ի կողմից վարչական ռեսուրսի չարաշահումը բացահայտելուց հետո Դանիել Իոննիսյանի հանդեպ ճնշումներին (տես՝ Մաս 3 և 3):

Մարդու իրավունքների պաշտպանության պետական կառույցները. Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) գրասենյակը պատասխանատու է մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները բոլոր մակարդակի պետական մարմինների կողմից

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

չարաշահումներից պաշտպանելու համար: Մարտին գործողության մեջ մտած օրենսդրական փոփոխություններով ընդլայնվել են օմբուդսմենի գրասենյակի լիազորությունները և այն հնարավորություն է ստացել ներկայացնել օրենսդրական նախաձեռնություններ, իրականացնել օրենքների քննություն մարդու իրավունքների տեսանկյունից և պաշտոնապես կարծիքներ և առաջարկներ ներկայացնել դատական և գործադիր ճյուղերում առկա անառողջ գործելակերպերի վերաբերյալ: Սակայն ըստ փորձագետների լիազորվածության մակարդակը և օմբուդսմենի գրասենյակի ռեսուրսները բավարար չեն նոր գործառնություններն իրականացնելու համար:

ՄԱՍ 6. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԱՆՑ ԹՐԱՏԻՔԻՆԳ

Կանայք

Բռնաբարություն և ընտանեկան բռնություններ. Բռնաբարությունը քրեական հանցագործություն է, որի համար դատապարտվելիս սահմանված առավելագույն պատժաչափը 15 տարվա ազատազրկումն է. ամուսնական բռնաբարության պարագայում գործում են բռնաբարության ընդհանուր հոդվածները: Ընտանեկան բռնությունը պատժվում է բռնության ընդհանուր հոդվածներով, սակայն իրավասու մարմինների կողմից ընտանեկան բռնության մասին պնդումների դեպքում չի եղել արդյունավետ քննություն կամ քրեական հետապնդում: Կանանց դեմ ուղղված ընտանեկան բռնությունը լայն տարածում ունի:

Եղել են հաղորդումներ, որ նման դեպքերում ոստիկանությունը, հատկապես Երևանից դուրս, դժկամությամբ է միջոցներ ձեռնարկել ու չի խրախուսել կանանց կողմից բողոքների ներկայացումը: Ըստ գործող օրենսդրության ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը որակվել են որպես թեթև կամ միջին ծանրության գործեր, իսկ կառավարության կողմից չի ձևավորվել այս հանցանքներով զբաղվող կին ոստիկանների և քննիչների կադրային բազա:

Կացարանները բավարար չէին երկրում բոլոր տուժողների կարիքները հոգալու համար: 2010-2016թթ. Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռալիցիա ՀԿ-ն արձանագրել է ներկայիս կամ նախկին գուգընկերոջ կամ ընտանիքի անդամի կողմից կանանց սպանության 40 դեպք: Կռալիցիայի կողմից 2016թ. կատարված ուսումնասիրության համաձայն այս կանանց մեծ մասն օգնության համար դիմած են եղել ընտանիքին կամ պետական հաստատություններին:

Կանանց իրավունքների պաշտպանության դիրքերից հանդես եկող ՀԿ-ները քննադատության էին ենթարկվում «ավանդական հայկական ընտանիքը» քայքայելու և «արևմտյան արժեքներ» տարածելու համար: Հայաստանյայց առաքելական եկեղեցու սպասավորները, ինչպես նաև պետական պաշտոնյաներն ամրապնդում էին այս կարծրատիպերը: 2016թ. նոյեմբերին Սպորտի և երիտասարդության նախարարության հովանավորությամբ թողարկված

Մարդու իրավունքների գեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

սոցիալական գովազդում ասվում էր, որ «օտարները» ուզում են կործանել երկիրը՝ վերացնելով հայկական ընտանիքի մոդելը:

Մեպտեմբերին կառավարության կողմից հանրային քննարկման ներկայացվեց «Ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի նախագիծը: Կանանց իրավունքների հարցերով զբաղվող խմբերն այս օրինագիծն ընդունեցին որպես առաջին լավ քայլն ընտանեկան բռնության դադարեցման ճանապարհին: Սակայն այլ ՀԿ-ներ և խմբեր, որոնց մի մասն ըստ հաղորդումների առնչություն ուներ Ռուսաստանի հետ, նախագիծը թիրախավորեցին որպես ավանդական ընտանեկան մոդելի սպառնալիք և թե՛ առցանց, թե՛ հեռարձակող լրատվամիջոցներում այն քննադատության ենթարկեցին, հաճախ տարածելով կեղծ տեղեկություններ՝ կապված նախագծի բովանդակության և այն պաշտպանող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների վերաբերյալ: Այս քննադատություններից հետո կառավարությունը ներկայացրեց նոր փոփոխված օրինագիծ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» վերտառությամբ, որն էլ խորհրդարանի կողմից դեկտեմբերի 13-ին ընդունվեց:

Սեռական ոտնձգություններ. Չնայած օրենքն անդրադառնում է անառակաբարո գործողություններին և անվայելուչ պահվածքին, սակայն այն կոնկրետ չի արգելում սեռական ոտնձգությունները: Դիտորդները կարծում են, որ աշխատավայրում կանանց հանդեպ սեռական ոտնձգությունները լայն տարածում ունեն:

Բնակչության վերահսկողության հարկադրանք. Չեն եղել հաղորդումներ հարկադրաբար հղիությունն արհեստականորեն ընդհատելու, ոչ կամավոր բեղմնականիման կամ բնակչության վերահսկման այլ հարկադրական մեթոդների կիրառման մասին: Մայրական մահացության ու հակաբեղմնավորիչների օգտագործման տարածվածության մասին տվյալները տես՝ www.who.int/reproductivehealth/publications/monitoring/maternal-mortality2015/en/:

Խտրականություն. Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավական կարգավիճակ, սակայն գենդերային խտրականությունը դեռևս խնդրահարույց էր և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներում: Եղել են կանանց հանդեպ խտրականության վերաբերյալ հաղորդումներ մասնագիտության ու զբաղվածության հարցերի հետ կապված: Շարունակում էր ցածր մնալ կանանց ներկայացվածությունը ղեկավար պաշտոններում՝ կառավարության բոլոր օղակներում ու մակարդակներում:

Համաշխարհային բանկի 2015թ. ուսումնասիրությամբ դիտարկվել են ավագ դպրոցի ուսումնական նյութերն ու դասընթացները և պարզվել է, որ գրքերում ներկայացման բոլոր

ձևերում՝ տեքստեր, նկարագրողումներ, նախապատվություն է տրվում տղամարդկանց, մինչդեռ կանայք առավել քիչ տեսանելի են ու պատկերված են կարծրատիպային եղանակով:

Գենդերով պայմանավորված պտղի սեռի խտրական ընտրություն. Ըստ Ազգային վիճակագրական ծառայության 2014թ. համեմատ ծնվելու պահին տղա-աղջիկ 114-100 հարաբերակցությունը իջել է, և տարվա առաջին կեսին կազմել է 110 տղա 100 աղջիկ: 2015թ. Առողջապահության նախարարությունն ու Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունը հաստատեցին պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները կանխելու միջնաժամկետ ծրագիր և ձևավորեցին աշխատանքային խումբ, որը համակարգում էր կառավարության ջանքերն այս հարցի առնչությամբ:

Երեխաներ

Ծննդի գրանցում. Քաղաքացիությունը երեխաներին անցնում է ծնողներից մեկից կամ երկուսից: Տարվա ընթացքում կառավարությունն ավարտին հասցրեց էլեկտրոնային կառավարման մի լայնամասշտաբ բարեփոխում, որը թույլ է տալիս կենտրոնացված համակարգի միջոցով գեներացնել ծննդյան մասին բժշկական տեղեկանք՝ գրեթե անհնար դարձնելով ծննդյան գրանցումից խուսափելը: Ծնունդների չգրանցման դեպքեր հիմնականում տեղ են գտել եզրիական և քրդական համայնքներում, որտեղ ծննդաբերում են տնային պայմաններում:

Կրթություն. Թեպետ կրթությունն անվճար է և պարտադիր մինչև 12-րդ դասարան, սակայն գործնականում այն չի կիրառվել համատարած կերպով: Կարիքավոր ընտանիքների և համայնքների երեխաների համար հասանելի չեն եղել վաղ տարիքի կրթական ծրագրերը՝ չնայած նախադպրոցական կրթության շրջանակն ընդլայնելու կառավարության ջանքերին: Էթնիկ փոքրամասնական խմբերի, մասնավորապես՝ եզդիների, քրդերի ու մուլկանների երեխաների շրջանում շատ ավելի ցածր է դպրոցի և դասերի հաճախելիության ցուցանիշը և բարձր է ութերորդ դասարանից հետո ուսումը կիսատ թողնելու ցուցանիշը: ՅՈՒՆԻՍԵՖ-ը մտահոգություն էր հայտնել տեղական համայնքում Սիրիայից, Իրաքից և Ուկրաինայից ժամանած փախստական երեխաների ինտեգրման վերաբերյալ:

Երեխաների նկատմամբ բռնություն. Հայկական և ադրբեջանական ուժերի միջև փոխհրաձգությունների հետևանքով սահմանամերձ բնակավայրերի երեխաների համար առկա էր վիրավորվելու կամ մահացու վնասվածք ստանալու վտանգ: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի երեխաների հանդեպ բռնությունների վերաբերյալ պաշտոնական ու ամփոփված տվյալների բացակայությունը սահմանափակում էր կառավարության հնարավորությունները մշակելու համապատասխան արձագանքման ազգային ծրագրեր կամ կանխարգելման միջոցներ: Չեն եղել պաշտոնական ուղղորդման մեխանիզմներ բռնության, այդ թվում՝ սեռական բռնության գոհ հանդիսացող երեխաների համար, իսկ երեխաների հետ աշխատող մասնագետների

համար ուղղորդման պարտադիր պահանջ չի եղել, բացառությամբ՝ բժիշկների, ովքեր երեխաներին հասցված մարմնական վնասվածքների մասին պարտավոր են ոստիկանությանը հաղորդում տալ:

Վաղ և պարտադրված ամուսնություն. Օրենքով սահմանված ամուսնական նվազագույն տարիքը 18-ն է: Աղջիկների շրջանում վաղ ամուսնություններն առավել տարածված են եզդիական համայնքներում, սակայն կառավարությունը դրանց մասշտաբներն արձանագրելուն կամ այդ պրակտիկան վերացնելուն ուղղված քայլեր չի ձեռնարկել:

Երեխաների սեռական շահագործում. Օրենքն արգելում է երեխաների սեռական շահագործումը և խախտումների դեպքում սահմանվում է 7-15 տարվա ազատազրկում: Մանկական պոռնկագրությունը պատժվում է մինչև յոթ տարի ազատազրկմամբ: Սեռական համաձայնության նվազագույն տարիք է համարվում 16 տարին:

Երեխաների վաճառքի, մարմնավաճառության և մանկական պոռնկագրության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի 2016թ. փետրվարի զեկուցում նշվում էր, որ թեպետ պաշտոնական վիճակագրությամբ հիշատակվում են երեխաների շահագործման ու վաճառքի սակավաթիվ դեպքեր, կան բազմաթիվ չբացահայտված և չհաղորդված դեպքեր, ինչը պայմանավորված է օրենսդրության, ուսուցման, իրազեկման բարձրացման, բացահայտման և հաշվետվությունների ներկայացման հետ կապված բացերով:

Հաստատություններում գտնվող երեխաներ. Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի և մյուս դիտորդների՝ հաստատություններում գտնվող երեխաների համար առկա էր ֆիզիկական ու հոգեբանական բռնության վտանգ մյուս երեխաների ու հաստատության անձնակազմի կողմից: Հյուսան Ռայթս Վոտչի փետրվարի 22-ի զեկույցի համաձայն հաստատությունների բեռնաթափման և ներառական կրթության մասով կառավարության քաղաքականությունը խտրական է և չի երաշխավորում հաշմանդամություն ունեցող երեխաների համար հավասար իրավունքներ այլ երեխաների հետ: Սոցիալական հարթակներում եղել են հաղորդումներ, որ կառավարության կողմից գիշերօթիկ դպրոցների փակումը՝ առանց ժամանակին ապահովելու այլընտրանքային սոցիալական խնամքի ծառայություններ ու հիմնական անհրաժեշտություններ, վտանգում է երեխաների բարօրությունն ու կրթության հասանելիությունը:

Երեխաների միջազգային առևանգում. Երկիրը միացել է «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թ. Հաագայի կոնվենցիային: Տես՝ Ծնողների կողմից երեխաների միջազգային առևանգումների վերաբերյալ ԱՄՆ պետքարտուղարության ամենամյա զեկույցը՝ travel.state.gov/content/childabduction/en/legal/compliance.html.

Հակասեմականություն

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Երկրի հրեա ազգաբնակչությունը կազմում է 500-1000 հոգի: Տարվա ընթացքում հակասեմական գործողությունների մասին հաղորդումներ չեն եղել:

Մարդկանց թրաֆիկինգ

Տես՝ Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիկինգի մասին զեկույցը <http://www.state.gov/j/tip/rls/tiprpt> էջում:

Հաշմանդամություն ունեցող անձինք

Օրենքով արգելվում է որևէ տեսակի հաշմանդամություն ունեցող մարդկանց հանդեպ խտրականություն կիրառել աշխատանքում, կրթության, առողջապահության հասանելիության և պետական այլ ծառայությունների տրամադրման գործում, սակայն խտրականությունը շարունակում է մնալ խնդրահարույց: Օրենքով և կառավարության հատուկ որոշմամբ պահանջվում է, որ նոր և վերակառուցվող շենքերը, այդ թվում՝ դպրոցները ֆիզիկապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Գործնականում շատ քիչ շենքեր ու հաստատություններ են եղել հասանելի, անգամ եթե դրանք նորակառույց են կամ նորոգված են: Բազմաթիվ հասարակական շինություններ, այդ թվում՝ դպրոցներ, մանկապարտեզներ եղել են ֆիզիկապես ոչ հասանելի, ինչի հետևանքով հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարողացել իրացնել իրենց ընտրական իրավունքը, քանի որ ընտրությունների ժամական այս շենքերը ծառայում են որպես ընտրական տեղամասեր: Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրական դիտորդների զեկույցի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններում ֆիզիկական հաշմանդամություն կամ սահմանափակ շարժունակություն ունեցող անձանց համար ոչ հասանելի են եղել դիտարկված տեղամասերի 69 տոկոսը:

Հաշմանդամների իրավունքների պաշտպանության պատասխանատվությունը վերապահված է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, որն արդյունավետ կերպով չի իրականացրել իր այս գործառույթը: Սեպտեմբերին կառավարությունը որոշում ընդունեց հաշմանդամություն անձանց լսողական սարքերի ու անվասայլակների փաստացի տրամադրման փոխարեն նրանց տրամադրել գնման վկայագրեր: Այնուհանդերձ, եղան հաղորդումներ, որ վկայագրերի արժեքը չէր ծածկում լսողական սարքերի ու անվասայլակների շուկայական արժեքը, ինչը ֆինանսական խնդիր էր ստեղծում դրանց կարիքն ունեցող անձանց համար:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 2014թ. զեկույցում նշվում էր, որ չնայած ներառական դպրոցների ցանցի մեծացմանն ուղղված պետության ջանքերին, պաշտոնյաներն այդ քաղաքականությունն ամբողջովին չէին իրագործում: Օրենքի համաձայն մինչև 2025թ. բոլոր դպրոցները դառնալու են ներառական:

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Բոլոր տեսակի հաշմանդամություն ունեցող մարդիկ խտրականության են հանդիպել կյանքի բոլոր ոլորտներում՝ այդ թվում՝ բուժօգնության, սոցիալ-հոգեբանական վերականգնման, կրթության, տրանսպորտի, հաղորդակցության, զբաղվածության, սոցիալական պաշտպանվածության և մշակութային միջոցառումների ու համացանցի օգտագործման հասանելիության հարցերում: Տեղեկատվության ու հաղորդակցության հասանելիության խնդիրն առավել մեծ էր տեսալսողական խնդիրներ ունեցողների համար:

Առավել մեծ է եղել խտրականությունը հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ, մասնավորապես սոցիալական ներառման, բուժօգնության ու վերարտադրողական ծառայությունների, զբաղվածության և կրթության հասանելիության մասով:

Ստանդարտներից ցածր էին նաև առավել լուրջ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հիվանդանոցային, տնային խնամքի և այլ ինստիտուցիոնալ պայմանները:

2015թ. հուլիսին կառավարությունը ներմուծեց պարտադիր քվոտաներ 100-ից ավել աշխատող ունեցող պետական ու մասնավոր հիմնարկներում հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ընդունելու համար: Այնուհանդերձ, մայիսին որոշվեց կասեցնել քվոտաների համակարգի կիրառումը:

Հաշմանդամության կարգի հիման վրա որոշվում է տարբեր սոցիալական նպաստների նշանակման հարցը: Լրատվամիջոցներում հաղորդումներ են եղել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքո հաշմանդամություն կարգերը սահմանող պետական մարմնի՝ Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի հետ կապված կոռուպցիոն դրսևորումների ու կամայական որոշումների մասին: 2016թ. դեկտեմբերին Ազգային անվտանգության ծառայությունը կաշառք պահանջելու համար ձերբակալեց և մեղադրանք առաջադրեց հանձնաժողովի նախագահ Արմեն Սաղոյանին և 16 հանձնաժողովականներին: Սեպտեմբերին գործն ուղարկվեց դատարան:

Սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված բռնության դրսևորումներ, խտրականություն և այլ չարաշահումներ

Հակախտրականական օրենսդրական դրույթները չեն տարածվում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վրա: Չկային ատելության հողի վրա կատարված հանցագործությունների դեմ պայքարող օրենքներ կամ այլ քրեական դատական մեխանիզմներ, որոնք կօգնեին ԼԳԲՏԻ համայնքի անդամների դեմ գործած հանցանքներով քրեական հետապնդում իրականացնելիս: Հասարակության կողմից սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված խտրականության դրսևորումը բացասաբար է անդրադարձել կյանքի բոլոր բնագավառներում՝ զբաղվածություն, բնակապահովում, ընտանեկան հարաբերություններ, կրթություն ու առողջապահական ծառայությունների

հասանելիություն: Տրանսգենդեր անձինք հատկապես խոցելի էին ֆիզիկական ու հոգեբանական բռնությունների ու հալածանքների տեսանկյունից:

Տարվա ընթացքում «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» (ՓԻՆՔ Հայաստան) ՀԿ-ն արձանագրել է ԼԳԲՏԻ անձանց դեմ ուղղված մարդու իրավունքների խախտման 27 դեպք, սակայն տուժողներից միայն 4-ն են, որ օգնության համար դիմել են Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին, իսկ իրավապահներին որևէ մեկը չի դիմել:

Լրատվամիջոցներում տեղ գտած հրապարակումների համաձայն օգոստոսի 23-ին քաղաքացիական հագուստով 30-35 տղամարդ՝ քաղաքապետարանի աշխատակցի առաջնորդմամբ հարձակում են գործել մի խումբ տրանսգենդեր մարմնավաճառների վրա՝ քաղաքապետարանի մոտակա այգում: Ոստիկանությունը միջամտեց, ապա այդ փաստով քրեական գործ հարուցվեց: «Նոր սերունդ» ՀԿ-ի փաստաբանները, ովքեր ներկայացնում էին տրանսգենդեր անձանց և մարմնավաճառներին, պնդում էին, որ նման խմբակային հարձակումներ տեղի են ունեցել առնվազն ամիսը մեկ անգամ, իսկ անձի կողմից հարձակումներ լինում են գրեթե ամեն օր: Շատ դեպքերում ոստիկանությունն արդյունավետ չի եղել տվյալ դեպքերը կանխելու կամ մեղավորներին ձերբակալելու հարցում:

Մայիսի 25-ին ՓԻՆՔ Հայաստանի կողմից Երևանի կենտրոնում տեղադրվեցին ԼԳԲՏԻ թեմայի հետ կապված սոցիալական գովազդի երեք պաստառ: Մայիսի 27-ին գովազդային ընկերությունը պատռեց-հանեց դրանք՝ հասարակության խիստ բացասական արձագանքին ի պատասխան: Պաստառների հանումից կարճ ժամանակ անց Երևանի քաղաքապետարանի մի պաշտոնյա իր ֆեյսբուքյան էջում կատարված գրառման մեջ նշել էր, որ հանդուրժողականությունը խթանող այդ երեք պաստառները տեղադրվել էին անօրինական կերպով և առանց քաղաքապետարանի թույլտվության: Ըստ ՓԻՆՔ Հայաստանի պաստառները չէին պարունակում որևէ նյութ, որն արգելված էր օրենքով, իսկ դրանց տեղադրումն իրականացվել էր ընդունված գործելակարգով և Երևանի քաղաքապետարանը խախտել է ՀԿ-ի ազատ արտահայտման իրավունքը: Պաստառների հանումից հետո հակա-ԼԳԲՏԻ խմբերի կողմից կիբերհարձակումներ սկսվեցին ՓԻՆՔ Հայաստանի կայքի նկատմամբ: Ֆեյսբուքում հաղորդում տեղադրվեց ՓԻՆՔ Հայաստանի գտնվելու հասցեով՝ խրախուսելով հարձակումներ գործել այդ կազմակերպության վրա: Հուլիսի 9-ին «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը մեկնարկեց մի շարք ոչ մրցութային ֆիլմերի, այդ թվում ԼԳԲՏԻ թեմային առնչվող 2 ֆիլմերի ցուցադրումը չեղարկելու մասին կազմակերպիչների հակասական որոշմամբ: Այս 2 ֆիլմերը ծրագրից հանվեցին փառատոնի գործընկերներից մեկի՝ «Կինեմատոգրաֆիստների միության» պահանջով: Ի պատասխան կազմակերպիչները փառատոնի մեկնարկից անմիջապես առաջ չեղարկեցին բոլոր ոչ մրցութային ֆիլմերի ցուցադրումը: «Նոր սերունդ» ՀԿ-ի 2016թ. կատարած ուսումնասիրության համաձայն տրանսգենդեր անձինք, ովքեր տարվա ընթացքում կամեցել են սեռափոխություն կատարել բախվել են առողջական ու այլ խնդիրների, որոնք պայմանավորված են առանց բժշկի

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

վերահսկողության հորմոնների ընդունման, ստվերային վիրահատությունների հետ և սեռափոխությունից հետո սեռափոխության փաստն ամրագրող փաստաթղթեր ստանալու հետ:

Հուլիսի 4-ին «Իրավունքի կողմ» ՀԿ-ը, որը տրանսգենդեր անձանց հարցերով է զբաղվում, հայտնել էր, որ իրենց գրասենյակ է եկել թաղապետարանի աշխատակիցը և սպառնացել ու վիրավորել իրենց նախագահին: Սեպտեմբերին կազմակերպության նախագահը հայտնեց, որ տանտերը հրաժարվել է երկարաձգել իրենց վարձակալության պայմանագիրը:

Ակնհայտ նույնասեռական տղամարդիկ ազատվում են զինվորական ծառայությունից: Ազատումը սակայն հիմնավորվում է հոգեյարդարանական հետազոտման բժշկական եզրակացությամբ առ այն, որ անձի մոտ կա հոգեկան խանգարում, և այս մասին նշում էր կատարվում անձը հաստատող փաստաթղթերում, որը խոչընդոտ է աշխատանքի տեղավորման և վարորդական վկայական ձեռք բերելու հարցում: Զինված ուժերում ծառայող նույնասեռական տղամարդկանց հանդեպ եղել են ֆիզիկական ու հոգեբանական ոտնձգություններ, ինչպես նաև շանտաժ:

ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի սոցիալական խարանդ

Ըստ իրավապաշտպան խմբերի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առումով խոցելի համարվող անձանց, մասնավորապես մարմնավաճառների (այդ թվում՝ տրանսգենդեր) և թմրամոլների նկատմամբ կա խտրականության ու բռնության դրսևորում հասարակության կողմից, ինչպես նաև ոչ իրավաչափ վերաբերմունք ոստիկանության կողմից:

ՄԱՍ 7. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ա) Միավորումներ կազմելու ազատությունը և կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքը

Օրենքը պաշտպանում է անկախ միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու բոլոր աշխատողների իրավունքը՝ բացառությամբ բանակում ոչ քաղաքացիական ծառայողների և իրավապահ մարմինների աշխատակիցների: Օրենքը նաև սահմանում է գործադուլների իրավունք՝ նույն բացառություններով, և թույլատրում է կոլեկտիվ պայմանագրերի կնքում: Օրենքը սահմանում է, որ գործադուլ սկսելուց առնվազն 7 օր առաջ պետք է այդ մասին ծանուցել գործատուին և մինչ այդ պետք է պարտադիր հաշտեցման գործընթաց լինի, ինչպես նաև աշխատողների 2/3-ի համաձայնությունը՝ արտահայտված գաղտնի քվեարկության միջոցով: Օրենքը նախատեսում է, որ միություններին անդամակցելու պատճառով աշխատողի իրավունքները չեն կարող սահմանափակվել: Աշխատանքային օրենսգրքում ներկայացվում

են այն հիմնավոր պատճառները, որոնց հիման վրա աշխատողին կարող են հեռացնել աշխատանքից, և այդ շարքում միութենական գործունեությունն ընդգրկված չէ:

Ապրիլի 27-ին աշխատողների առողջության և անվտանգության ապահովման բնագավառում առաջադրվող պահանջների իրականացումը երաշխավորելու նպատակով կառավարության որոշմամբ ձևավորվեց Առողջապահական տեսչական մարմին (USU)՝ Առողջապահության նախարարության կազմում: Թեպետ սեպտեմբերի դրությամբ USU վերջնական կազմն ու լիազորությունների շրջանակը դեռ քննարկվում էին, սակայն կառույցի կանոնադրությամբ կային սահմանափակ հղումներ աշխատանքային օրենսդրությանն ու աշխատանքային իրավունքներին, ինչպես նաև նախատեսվում էին տեսչական ստուգումներ անցկացնելու սահմանափակ իրավասություններ՝ կապված անչափահասների, հղի կանանց և կրծքով կերակրող ու երեխայի խնամքով զբաղվող կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանության երաշխավորման հետ: Կառավարությունն արդյունավետորեն չի կիրառել միավորումներ կազմելու և կոլեկտիվ պայմանագրերի մասին օրենքները և չի սահմանել, թե որ կառույցն է այդ օրենքների կիրարկման համար պատասխանատու:

Երկրում գործատուների դիմադրության, գործազրկության բարձր մակարդակի և վատ տնտեսական պայմանների պատճառով աշխատավորական կազմակերպությունները մնացել են թույլ: Աշխատողներն աշխատանքային իրավունքի խախտումների մասին չեն հայտնել՝ վախենալով գործատուի հաշվեհարդարից և ընդհանուր առմամբ չեն ներկայացրել պաշտոնական բողոքներ: Արհմիությունները հիմնականում պասիվ են եղել, իսկ հանքարդյունահանման ու քիմիական արդյունաբերության ոլորտի արհմիությունները դիտարկվել են որպես սեփականատերերի կողմից նշանակված անձինք: Ըստ տեղական դիտորդների՝ պաշտոնապես արհեստակցական միություն ստեղծելու համար գործնականում պահանջվում է գործատուի ոչ պաշտոնական համաձայնությունը:

բ) Հարկադիր կամ ստրկական աշխատանքի արգելում

Օրենքով արգելվում են և քրեորեն պատժելի են համարվում հարկադիր կամ ստրկական աշխատանքի բոլոր տեսակները, սակայն օրենքում «հարկադիր աշխատանքի» սահմանում չի տրվում: Թեպետ կառավարությունն արդյունավետ կերպով քրեական հետապնդում է իրականացրել աշխատանքային թրաֆիքինգի գործերով, սակայն ռեսուրսները, ստուգումներն ու լուծումները համարժեք չէին, որպեսզի բացահայտվեին հարկադիր աշխատանքի դեպքերի ողջ շրջանակը՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի ոլորտում տեսչական ստուգումների արդյունավետ մեխանիզմի բացակայությամբ: Աշխատանքային թրաֆիքինգի համար նախատեսվում է պատիժ 5-ից 15 տարվա ազատազրկման տեսքով, որը բավարար խիստ պատիժ է խախտումները կանխելու համար:

Տես նաև՝ Մարդկանց թրաֆիքինգի մասին Պետքարտուղարության գեկույցը www.state.gov/j/tip/rls/tiprpt էջում:

զ) Երեխայի աշխատանքի արգելում և աշխատելու նվազագույն տարիք

Գոյություն ունեն օրենքներ ու կարգեր, որոնք երեխաներին աշխատավայրում պաշտպանում են շահագործումից: Աշխատանքի անցնելու նվազագույն տարիքը 16-ն է, սակայն ծնողի կամ խնամակալի թույլտվությամբ երեխաները կարող են աշխատել 14 տարեկանից: 14 տարին չլրացած երեխաներին օրենքը թույլատրում է ընդգրկվել ստեղծագործական աշխատանքում՝ կինեմատոգրաֆիայի, մարզական, թատերական և համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում և ռադիոյում: 14-16 տարեկան երեխաների համար սահմանված է 24-ժամյա առավելագույն շաբաթական աշխատաժամանակ, իսկ 16-18 տարեկանների համար՝ 36 ժամ: 18 տարին չլրացած անձանց համար արգելվում է արտաժամյա աշխատանքը, աշխատանքը վնասակար, դժվարին ու վտանգավոր պայմաններում, աշխատանքը տոն օրերին և գիշերային ժամերին: Համապատասխան մարմինների կողմից օրենքի արդյունավետ կիրառումը չի ապահովվել: Չկար պատժամիջոցների բավարար մակարդակ, որը կապահովեր այս պահանջների կատարումը:

Ըստ Ազգային վիճակագրական ծառայության և Աշխատանքի միջազգային կազմակերպության պատրաստած «Հայաստան. երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն 2015թ.» վերլուծական գեկույցի՝ 5-17 տարեկան երեխաների 11.6 տոկոսն աշխատում են: Մեծ մասը ներգրավված են գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտներում, իսկ մյուսներն աշխատել են առևտրի, նորոգման, փոխադրումների, պահեստավորման, կացության և հանրային սննդի ծառայությունների ոլորտում: Երեխաները զբաղվել են նաև շարժիչային վառելիքի, շինանյութի, դեղորայքի առևտրով, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքներով: Հետազոտության տվյալների համաձայն զբաղված է եղել 39.300 երեխա, որոնցից 31.200-ը ներգրավված են եղել վնասակար աշխատանքում, մասնավորապես՝ վնասակար ոլորտներում (400 երեխա), վնասակար զբաղմունքներում (600 երեխա), երկար աշխատաժամերով աշխատանքներում (1.200 երեխա), ծանր բեռների փոխադրում մեծ հեռավորությունների վրա (17.200 երեխա) և վնասակար աշխատանքի այլ ձևերում (23.600 երեխա):

Տես նաև՝ ԱՄՆ աշխատանքի դեպարտամենտի Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի մասին բացահայտումները www.dol.gov/ilab/reports/child-labor/findings/ էջում:

դ) Աշխատանքային կամ մասնագիտական խտրականություն

Նոր սահմանադրությամբ արգելվում է խտրականությունը կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից,

աշխարհայացքից, քաղաքական հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից: Այլ օրենքներով ու կանոնակարգերով արգելվում է կոնկրետ աշխատանքային և մասնագիտական խտրականությունն ըստ սեռի: Կառավարությունն արդյունավետորեն չի ապահովել օրենսդրության կիրառումը: Չեն եղել արդյունավետ իրավական մեխանիզմներ ապահովելու այս կանոնակարգերի կիրառումը և եղել են աշխատանքային ու մասնագիտական խտրականության դրսևորումներ պայմանավորված սեռով, տարիքով, հաշմանդամության առկայությամբ, սեռական կողմնորոշմամբ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունենալու հանգամանքով և կրոնական պատկանելությամբ, և անգամ չի եղել պաշտոնական կամ այլ վիճակագրություն այսօրինակ խտրականության ծավալների վերաբերյալ: Գործող վարչական պատժամիջոցները բավարար չէին երևույթը կանխելու համար:

Ընդհանուր առմամբ կանայք չեն ունեցել մասնագիտական կամ աշխատավարձային նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ, և հաճախ կատարել են որակավորում չպահանջող կամ ավելի ցածր վարձատրվող աշխատանքներ: Չնայած աշխատանքային օրենսգրքով աշխատանքային հարաբերությունների բոլոր կողմերի համար սահմանվում է «իրավահավասարություն», սակայն այն հավասար աշխատանքի համար հավասար վարձատրություն ապահովելու հստակ պահանջ չի դնում: 2016թ. Համաշխարհային բանկի կողմից ներկայացրած տվյալների համաձայն միջնակարգ կրթություն ունեցող կանանց մեկ երկրորդը և բարձրագույն կրթություն ունեցող կանանց մեկ երրորդը ներգրավված չեն վարձատրվող որևէ աշխատանքում: Համաշխարհային բանկի 2017թ. «Կանանց համար հավասար պայմանների ապահովում բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) բնագավառներում» ուսումնասիրության համաձայն «Հայաստանում կանանց և տղամարդկանց հավասարությանը խոչընդոտող ամենից նշանակալի գործոնն ազգային մշակույթում առկա կարծրատիպերն են՝ կանանց ընտանեկան պարտականությունների և այն մասին, թե ինչ տեսակի աշխատանք պետք է նրանք կատարեն»: Ասիական զարգացման բանկի 2015թ. «Հայաստան. գենդերային գնահատում» զեկույցում մատնանշվում էր, որ բազմաթիվ կանայք ներգրավված են սովետային ոլորտում, ինչը նրանց զրկում է աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված պաշտպանություններից: Կանայք նաև մեծամասնություն էին կազմում գրանցված գործազուրկների շրջանում, իսկ աշխատանք գտնելու համար կանանցից ավելի երկար ժամանակ էր պահանջվում: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կատարած «Գենդերային հավասարության անհամապատասխանությունների ախտորոշիչ ուսումնասիրության» համաձայն, որը հրատարակվեց 2016թ. մարտին, կանանց ու տղամարդկանց աշխատավարձերի միջև անհամապատասխանությունը տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում կազմում էր շուրջ 36 տոկոս:

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Շատ գործատուներ, ըստ հաղորդումների, խտրականություն են դրսևորում ըստ տարիքի՝ հաճախակի պահանջելով, որ թափուր տեղերի համար դիմողները լինեն 18-30 տարեկան: Չնայած որ խտրականության այս դրսևորումը բավական լայն տարածում ուներ, իշխանությունները ոչ մի գործողություն չեն ձեռնարկել այն մեղմելու համար: Լայն տարածում ունեին թափուր տեղերի մասին հայտարարությունները, որտեղ պահանջվում էին երիտասարդ, բարետես կանայք: Գործազուրկ դարձած աշխատողները, հատկապես՝ կանայք, 40 տարեկանից հետո շատ քիչ հնարավորություն ունեն իրենց կրթությանն ու հմտություններին համարժեք աշխատանք գտնել: ԼԳԲՏԻ անձինք, հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև հղի կանայք զբաղվածության հարցերում նույնպես հանդիպել են խտրականության: Կրոնական փոքրամասնությունների նկատմամբ խտրականություն է եղել պետական հիմնարկներում աշխատելու հարցում:

ե) Աշխատանքի ընդունելի պայմաններ

Ամսական նվազագույն աշխատավարձն աղքատության շեմից բարձր է: Օրենքով աշխատանքային շաբաթվա տևողությունը 40 ժամ է, և սահմանված է տարեկան 20 օր պարտադիր վճարովի արձակուրդ, ինչպես նաև փոխհատուցում արտաժամյա և գիշերային աշխատանքի դիմաց: Օրենքով նաև սահմանվում է, որ պարտադիր արտաժամյա աշխատանքը երկու հաջորդական օրվա ընթացքում չի կարող գերազանցել 4 ժամը, իսկ տարվա ընթացքում՝ 180 ժամը: Աշխատավայրում առողջության ու անվտանգության պահպանման ստանդարտները սահմանվել են կառավարության որոշմամբ:

Համապատասխան մարմինների կողմից այս ստանդարտների կիրառումն արդյունավետորեն չի ապահովվել ո՛չ օրինական, ո՛չ սովերային ոլորտներում: Ըստ իրավաբանների աշխատողների իրավունքները շարունակել են մնալ չպաշտպանված՝ պայմանավորված աշխատանքային տեսչական ստուգումների կայուն ռեժիմի բացակայությամբ, անկախ արհմիությունների բացակայությամբ և վարչական դատարանների գերբեռնվածությամբ, որտեղ նոր գործերին ընթացք է տրվում դրանց ընդունումից հետո ավելի քան մեկ տարի անց:

Մասնավոր ոլորտի շատ աշխատողներ, հատկապես սպասարկման և մանրածախ ծառայությունների ոլորտում չեն կարողացել օգտվել վճարովի արձակուրդից ու նրանցից պահանջվել է աշխատել օրական 8 ժամից շատ ավել՝ առանց վարձատրության: Ըստ որոշ զբաղվածության գործակալությունների ներկայացուցիչների շատ գործատուներ աշխատողներին ընդունել են 10-30 օր չձևակերպված ոչ վճարովի «փորձաշրջանով»: Այնուհետև հաճախ այս աշխատողներին արձակել են, բայց, քանի որ այս նախնական աշխատանքն օրինականորեն ձևակերպված չէր, նրանք չեն կարողացել պահանջել աշխատած օրերի վճարը:

Որոշ աշխարհագրորեն աղքատ բնակավայրերում հիմնական գործատու հանդիսացող ձեռնարկությունների կառավարիչները հաճախ օգտվելով այլ աշխատանք չլինելու հանգամանքից չեն ապահովել համարժեք վարձատրության, աշխատանքի անվտանգ պայմաններ և քայլեր չեն ձեռնարկել բնապահպանական մտահոգությունների հետ կապված:

Երկրի բոլոր աշխատողների մոտ կեսն աշխատանք է գտել սովերային ոլորտում, որտեղ նրանք խոցելի են գործատուների չարաշահումների տեսանկյունից և չունեն պետական պաշտպանություն: Եղել են բազմաթիվ հաղորդումներ ընտրական ժամանակաշրջաններում աշխատողների իրավունքների ոտնահարումների մասին թե՛ մասնավոր, թե՛ հանրային հատվածում, երբ աշխատանքը կորցնելու սպառնալիքով աշխատողներից պահանջել են որոշակի կուսակցության կամ թեկնածուի օգտին քվեարկել կամ ապահովել որոշակի քվեներ: Այս հաղորդումներն հիմնականում առնչվում էին հանրակրթական դպրոցների, հիվանդանոցների, պետական հիմնարկների աշխատողներին և մեծ ընկերություններին, որոնք պատկանում էին ՀՀԿ-ական օլիգարխներին:

Շատ ոլորտներում աշխատավայրի անվտանգության ու առողջապահական պայմանները շարունակել են չհամապատասխանել ստանդարտներին, և տարվա ընթացքում գրանցվել է մահացու ելքով մի քանի աշխատանքային պատահար: Հաշվի առնելով երկրում տիրող գործազրկության բարձր մակարդակը՝ աշխատողները սովորաբար չեն թողնում այնպիսի աշխատանքները, որտեղ առողջության կամ անվտանգության համար վտանգավոր իրավիճակներ կան: Նման իրավիճակներում համապատասխան մարմինների կողմից աշխատողներին պաշտպանություն չի ապահովվում, իսկ վերջիններս էլ սովորաբար իրենց իրավունքների խախտումների մասին հաղորդումներ չեն ներկայացնում:

Epress.am-ի կողմից ներկայացված մի օրինակում տարվա ընթացքում աղբահանություն իրականացնող Սանիտեք ընկերության աշխատողների հաղորդումների համաձայն ընկերությունը չի ապահովել աշխատանքային անվտանգության նորմերը: Ըստ աշխատողների վկայությունների ընկերությունը նրանց ստիպել է աշխատել շաբաթական 7-ն օր և չի տրամադրել ամենամյա արձակուրդ: Հաճախ նրանք աշխատել են սահմանված 8 ժամից ավել՝ հնարավորություն չունենալով հանգստյան ընդմիջումներ անել և որոշ օրերի աշխատել են մինչև 17 ժամ:

Ընկերության կողմից աշխատանքի անվտանգ պայմաններ չապահովելու հետևանքով Սանիտեքի աշխատակիցներին մեքենաներ են հարվածել, ընդ որում գրանցվել է 3 դեպք 2 շաբաթվա ընթացքում: Այս երեք աշխատակիցները ստացել են լուրջ վնասվածքներ. նրանցից մեկը կորցրել է ոտքը: Բացի բժշկական ապահովագրությունից, որով երկարատև կամ մշտական անաշխատունակության ծախսերը չեն ծածկվում, որևէ այլ փոխհատուցում նրանք չեն ստացել: Ըստ վկայությունների ընկերությունն աշխատանքի անվտանգ պայմաններ չի ապահովել և նախկինում աշխատողների աշխատավարձը կրճատել է շուրջ 20 տոկոսով և նրանց ստիպել է ստորագրել նոր պայմանագիր՝ առանց պայմաններին ծանոթանալու:

Մարդու իրավունքների զեկույց 2017թ.

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Ընկերությունն ըստ պնդումների աշխատանքից հեռացրել է այն աշխատողներին, ովքեր երկրորդ աշխատանք են գտել և նրանց ներառել է «սև ցուցակում», որպեսզի հետագայում նրանց վերստին աշխատանքի չընդունեն: Վնասվածք ստացած աշխատողներից մեկը նշում էր, որ աշխատողների մեծ մասն այնքան շատ ունեն աշխատանքի կարիք, որ երբևէ չեն բարձրաձայնի այս չարաշահումների մասին: